

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1. Հին Հայոց աստվածները հիշվում են տեղական և հունական անուններով՝ Արամազդ-Ջևս, Անահիտ-Արտեմիս և այլն: Տեղական անունները ծագումով հիմնականում իրանական են (Արամազդ, Անահիտ, Վահագն, Միհր, Տիր), երկուսը փոխառված են Միջագետքից (Բարշամին, Նանե), մեկը բնիկ հայկական է (Աստղիկ):

Ուսումնասիրողները եղած տվյալները մեկնաբանել են հաճախ ըստ դիցանունների ստուգաբանության և Հայ նախաքրիստոնեական դիցարանն ու կրոնը համարել փոխառված հիմնականում իրանականից և, ավելի փոքր մասով՝ սեմականից, ուր միայն որոշ տեղական (խեթական, խուռուռարտական) ներդրման հետքեր միայն կարելի է գտնել: Այսինքն, համարվել է, որ փոխառված դիցանունների տակ հանդես են եկել փոխառված կերպարներ: Սակայն դիցաբանական անունների նույնությունը միշտ չէ, որ վկայում է կերպարային նույնության մասին: Այսպես, հինարևելյան երկրների բազում աստվածներ սկզբնապես նույնացվել են

¹ Հայ հեթանոսական աստվածների վերաբերյալ լավագույն ամբողջական, համակարգված աշխատությունը մնում է H. G e l z e r. Zur armenischen Gotterlehre. Leipzig, 1896 (Հ. Գելցեր. Հեազոտություն Հայ դիցաբանություն. Վենետիկ, 1897): Փաստական նյութով առավել հարուստ է, թեև որոշ հարցերում ավելի հնացած՝ Ղ. Ալիշան. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ 1895: Հայոց լեզվում և հավատալիքներում հինարևելյան միջագետքյան, խուռուհական, խեթական բազմաթիվ դիցանունների հետքեր է փորձել ցույց տալ Գ. Ղափանցյանը, տե՛ս Հատկապես Գ. Ա. Կ ա ր ա ը յ ա Ն. Хеттские боги у армян. Ереван, 1940 (տե՛ս Историко-лингвистические работы. Т. I, Ереван, 1956, с. 267-327): Հայոց դիցարանում և հավատալիքներում իրանական ազդեցության գերազանցատման օրինակ է՝ Р. Р. Ш т а к е л ь б е р г. Об иранском влиянии на религиозные верования древних армян. — "Древности Востока". Труды восточной комиссии", т. 2, вып. 2, М., 1901. Միևնույն մոտեցումն է իշխում և արևմտյան հայագետների որոշ աշխատանքներում, տե՛ս Հատկապես J. R u s s e l l. Zoroastrianism in Armenia. Cambridge MA, London, 1987, Encyclopaedia Iranica-ի (այսուհետև՝ EIr. London, Boston, 1985) բազում հոդվածներում և այլուր: Հայոց դիցարանի վերաբերյալ եղած համարյա բոլոր աշխատություններն էլ հնացած են, բազմաթիվ հարցերում նաև մեթոդաբանորեն անընդունելի: Պետք է նշել, որ Ղ. Ալիշանին, Հ. Գելցերին, Ռ. Շտակելբերգին և նրանց ժամանակակիցներին դեռ ոչինչ կամ համարյա ոչինչ հայտնի չէր Ուրարտուի, անատոլիական ու ինուռիական պետությունների պատմության, լեզվի, մշակույթի ու կրոնի մասին, իսկ հայագիտությանը զբաղվող եվրոպական, հիմնականում գերմանական գիտնականներն ի սկզբանե իրանագետներ էին, հակված գերադնահատելու «արիական» իրանական տարրը, որն առաջին հայացքից աչքի է զարնում Հայաստանի և մերձակա երկրների մշակույթներում: Գ. Ղափանցյանը նվազագույնի էր հասցնում Հայոց լեզվում և մշակույթում հնդեվրոպական տարրի դերը: Ժամանակակից իրանագետների պանիրանական մոտեցումը ինչ-որ չափով հասկանալի է, թեև քննադատության արժանի և դալիս է, մասամբ, հայագիտությանն անտեղյակ լինելուց: Ինչ վերաբերում է արևմտյան հայագետների այն աշխատանքներին, ուր միազիժ կերպով շարունակվում է Հայաստանի մշակույթի հիմքում միայն իրանական երևույթներ տեսնելու կանխակալ միտումը, դրանք անհրաժեշտաբար պետք է քննադատվեն:

միջազգետքյան, իսկ հետո՝ հունական աստվածներին և հիշվում են առաջ շումերաաքադական, ապա՝ հունական անուններով, բայց պահպանել են իրենց տեղական հին կերպարներն ու պաշտամունքները²: Իրանական որոշ աստվածների կերպարներ ևս ծագում են միջազգետքյան նախատիպերից (Անահիտա, Տիրի)³։ մյուսներն ազդվել են նրանցից, իսկ հելլենիզմի դարաշրջանում համադրվել հունականների հետ։

Նույնիսկ քրիստոնեություն ընդունումը, շատ առումներով, Վ. Աբաևի արտահայտություններով, կարելի է ներկայացնել որպես «տերմինաբանական և անվանաբանական հեղաշրջում»⁴՝ հին աստվածների պաշտամունքը շարունակվել է քրիստոնեական սրբերի անունների տակ։ Եվ եթե քրիստոնեությունն իր հզոր կազմակերպություններով և դարավոր տիրապետություններով, նույնիսկ զարգացած ու հզոր պետությունների պայմաններում, իր բազմաթիվ դրսևորումներով եզրով միայն տերմինաբանական և անվանաբանական հեղաշրջում, ապա ի՞նչ կարելի է ասել շատ ավելի վաղ դարաշրջաններում տեղի ունեցած կրոնական ազդեցությունների ու փոփոխությունների մասին։ Այսինքն՝ իրանական ազդեցություններով պայմանավորված կրոնական փոփոխությունը նույնպես պետք է լիներ հիմնականում տերմինաբանական և անվանաբանական։ Փոխվել են դիցանուններն ու պաշտամունքային տերմինները, որոնցից շատերը դարձել են իրանական, բայց կերպարներն ու պաշտամունքները մնացել են հինը։

Նոր կրոնների անցման և կամ մշակութային ազդեցությունների ժամանակ դիցաբանական կերպարները համադրվում են հիմնականում ըստ դործառությունների համապատասխանության (կարևոր դեր են կատարում նաև տոնի օրվա համընկումը և անունների համահնչությունը)։ վերադրվելով որևէ վայրում տեղայնացած՝ հին պաշտամունքի վրա, նոր անունով կերպարը իրենում ներառում է նախորդի հատկանիշները։

Հայոց աստվածների մեծ մասի (Արամազդը, Անահիտ, Միհր, Նանե, Բարշամին) պաշտամունքը կենտրոնացած է եղել Մեծ Հայքի հյուսիսարևմտյան մի ծայրամասում՝ Դարանաղի, Եկեղյաց և Դերջան գավառներում, ընդգրկված հիմնականում անտիկ աղբյուրների Ակիլիսենում (Հայ. Եկեղյաց գավառն իր մերձակայքով)։ Այս տարածաշրջանը որպես կարևորագույն կրոնական կենտրոն մնաց նաև քրիստոնեության հաստատումից հետո՝ այն դարձվեց Լուսավորչի տոհմի տիրույթը։ Մեծ Հայքի արևմտյան պաշտամունքային կենտրոններից համեմատաբար հեռու էր միայն Վահագնի, Անահիտի և Աստղիկի միասնական տաճարական համալիրը Տարոնում։ Ինչ վերաբերում է համապետական նշանակության պաշտամունքի արևելյան կենտրոններին (Արմավիր, Բագարան, Բագավան, Ար-

² Սեպուհի դրություն մեջ ընդունված էր, հնարավորության սահմանում, դիցանունները հաղորդել շումերոգրամներով, իսկ հույն և հռոմեացի հեղինակներն օտար աստվածներին կոչում էին իրենց աստվածների անուններով։ Այդ իսկ պատճառով մեզ հայտնի չեն այդ սկզբունքներով հաղորդված բազմաթիվ (այդ թվում՝ իսթական, հայասական, սկյութական, կելտական) աստվածների ընդհանուր անունները։ Նույնիսկ հայկական աղբյուրներում հայոց աստվածները առավել հաճախ կոչվել են հունական անուններով։

³ М. Б о й с. Зороастрийцы: верования и обычаи. М., 1987, с. 76-77.

⁴ В. А б а е в. Как апостол Петр стал Нептуном. — "Этимология, 1970", М., 1972, с. 322.

տաշատ), դրանք թերևս մասամբ ծագում են Արարատյան դաշտի հին, տեղական պաշտամունքներից, մասամբ էլ երկրորդային են, մայրաքաղաքի՝ Արարատյան դաշտում դտնվելու արգյունք: Եղել են նաև այլ կենտրոններ, ասենք՝ Արամաղդի և Աստղիկի պաշտամունքը Անձևացյաց գավառում, որոնք անհամեմատելի են հիշյալ համապետական սրբավայրերի հետ:

Ըստ Ստրաբոնի բերած լեգենդի, հայերի նախնի արգոնավորդ Արմենոսն ու նրա ուղեկիցները սկզբնապես հաստատվել են «Ակիլիսենեում և Սիսալիբիտիսում մինչև Կալաքենե և Ադիաբենե» (Ստրաբոն XI.4.8, 14.12): Այսինքն, Ակիլիսենեն Եփրատի ամենավերին հոսանքների շրջանն է եղել՝ հայոց սկզբնական օրրանը, որտեղից նրանք տարածվել են Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում: Այս լեգենդն, անշուշտ, ինչ-որ պատմական հիմքեր ունի: Ակիլիսենեի տարածքը մ.թ.ա. XV-XIII դդ. ընդգրկված է եղել խեթական աղբյուրներում Հայասա (Hayasa) անունով հիշվող թագավորության կազմում, որին հարցին իրադեկ մասնագետների ճնշող մեծամասնությունն առանցքային դեր է վերագրում հայոց աղագածագման և վաղնջական պատմության մեջ⁵: Հետագայում այն եղել է այլոց տիրապետության տակ և, ի վերջո, միավորվել սկզբում Մոփքի հայոց թագավորությանը, մ.թ.ա. երկրորդ դարասկզբին, և մեկ դար անց՝ Տիգրան Մեծի օրոք, Մեծ Հայքին (Ստրաբոն, XI.4.5, 12, 15): Այսինքն՝ ըստ Ստրաբոնի,

⁵ Հայ-Հայասա կապի վերաբերյալ տեսական առաջինն արտահայտել է Ն. Մարտիրոսյանը (1924), ապա, հիմնականում անկախաբար, Կ. Ռոթը (1927), Գ. Ղափանցյանը (1931), Պ. Կրեյմերը (1932), Ա. Խաչատրյանը (1933) և այլք, և մանրամասն հիմնավորվել Գ. Ղափանցյանի մենագրության մեջ՝ Г. А. К а п а н ц я н. Хайаса — колыбель армян. Ереван, 1948. Историко-лингвистические работы. с. 5-265). Հայոց աղագածագման գործընթացում Հայասայի հավանական կարևորագույն դերի մասին գրել է Ն. Ադոնյը, տես Ն. Ադոնյի Գ. Հայաստանի պատմություն. Երևան 1972, էջ 32 (գրքի ֆրանսերեն բնագիրը լույս է տեսել 1946-ին, հեղինակի մահվանից չորս տարի անց): Հետագայում հայոց աղագածագման հայաստանյան վարկածը, իր տարբեր ձևակերպումներով, պաշտպանել են Հ. Մանանդյանը, Բ. Պիտրովսկին, Գ. Մելիքիչվիլին, Ս. Երեմյանը, Վ. Գեորգիևը, Վ. Բրեյցյանուն, Գ. Ջտհուկյանը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Գ. Սարգսյանը և այլք, տես Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Ա. Երևան 1944, էջ 32-33. Я. А. М а н а н д я н. Сообщения хеттских, ассирийских, урартийских и древнеармянских источников о Хайаса-Аззи. — Հ. Մանանդյան. Երկեր. Հ. Ե, Երևան 1984, էջ 489-562 (առաջին հրատարակությունը՝ 1956-ին). Բ. Պիտրովսկի. Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջ. — ՀՄՍՍ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1945, №6, էջ 25-26. В. И. Г е о р г и е в. Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, с. 171. Ս. Երեմյան. Հայերի ցեղային միությունը Արմենոսիայի երկրում. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1958, №3. В. Б э н э ц я н у. Некоторые вопросы этногенеза армян. — "Историко-филологический журнал" (այսուհետև՝ — ИФЖ), 1961, № 2, с. 91-123; Г. Б. Д ж а у к я н. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964. Ն ու յ ի Օ соотношении хайасского и армянского языков. — ИФЖ, 1988, №№ 1, 2; В. В. И в а н о в. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну. — ИФЖ, 1983, № 4, с. 30-33; Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 913. Բ. Անաքեյան, Գ. Ջտհուկյան, Գ. Սարգսյան. Ուրարտու-Հայաստան. Երևան 1988, էջ 51-52: Հարցին իրագեկ նշանավոր մասնագետներից այդ տեսակետը չէր ընդունում միայն Ի. Դյակոնովը, տես Ի. Մ. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 209-214.

մինչև Տիգրան Մեծը այդ տարածքները նույնիսկ մեծ Հայքի կազմում չեն եղել:

Բայց ինչու՞ պիտի Մեծ Հայքի արքան իր երկրի դիտավոր պաշտամունքները կենտրոնացներ նոր գրավված ինչ-որ ծայրամասային գավառներում: Հաշվի առնելով Ստրաբոնի բերած լեզուները, կարելի է կարծել, որ Բարձր Հայքի աստվածները հնուց ի վեր հայոց համար էական, թերևս համահայկական նշանակություն են ունեցել: Ելնելով կրոնական փոփոխությունների ժամանակ հին գիցաբանական կերպարների՝ իրենց պաշտամունքի վայրերում վերանվանված ձևով պահպանվելու դրույթից, կարելի է կարծել, որ Հայաստանի աստվածներն են եղել այստեղի հայոց նախաքրիստոնեական աստվածների հնագույն նախատիպերը⁶: Սա, հայոց ազգածագման հունական լեզուների հետ, Հայաստան-հայ ժառանգորդության ուժեղ փաստարկներից մեկն է:

Իրանական գիցանունները Հայաստանում հայտնի են արդեն Աքեմենյան և վաղ հելլենիստական դարաշրջաններից՝ Քսերքսես I-ի (մ.թ.ա. 486-465) Վանա ժայռի արձանագրության մեջ հիշվում է Աուրամադան⁷, Ահուրա Մադայի աքեմենյան արձանագրությունների անվանաձևը, իսկ Արմավիրի մ.թ.ա. II դ. հունարեն արձանագրության մեջ՝ Միթրան⁸: Բայց մեզ հասած հայ-իրանական գիցանունները ծագում են ուշ՝ պարթևական Արամածոթ, Mihr և *Varhragn նախատիպերից⁹ ու չեն կարող հանգեցվել աքեմենյան դարաշրջանի A(h)uramazda, Miθra և *Varθragna ձևերին: Այսպիսով, այս գիցարանը կարող էր ձևավորվել, թերևս, հենց Տիգրան Մեծի օրոք, որպես Մեծ Հայքի կենտրոնացված պետության պետական գիցարան: Հետագայում այն որոշակի փոփոխությունների պիտի ենթարկվեր հայ Արչակունիների օրոք (օրինակ, հնարավոր է, որ Միհր և Վահագն անունները դալիս են այդ դարաշրջանից):

Դատելով մեզ հասած տեղեկություններից, վերոհիշյալ ութ աստվածներն են կազմել Մեծ Հայքի նախաքրիստոնեական դարաշրջանի պետական գիցարանի հիմնական պաշտամունքները: Հին աղբյուրները հիշում են նաև գիցաբանական այլ կերպարներ (Անգեղ, Սանդարամետ, Վանատուր, Ամանոր և այլն), որոնք չեն կարող հավասար դիտվել այս աստվածներին:

2. Արամազդի պաշտամունքը կենտրոնացած էր Դարանաղի դավառի Անի ամրոցում, կամ այլ կերպ՝ Անի-Կամախում, որը մ.թ.ա. երկրորդ հարամյակի կեսից խեթական աղբյուրներում հիշվում է որպես Կումմա-

⁶ А. Е. Петросян. Армянский эпос и мифология. Ереван, 2002, с. 138 сл.

⁷ R. G. Kent. Old Persian Grammar, Texts, Lexicon. New Haven, 1953, p. 152-153.

⁸ К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении. М. – Л., 1953, с. 83, 134.

⁹ Արամազդի այս պարթևական նախատիպն ավանդված է մ.թ.ա. I դ., տե՛ս Ա. Մեյլի Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 117: Վահագնի ծագումը պատկերացվում է այսպես՝ Վահագն < *Վարհագն < պարթև. Varhragn < հին իրան. *Varθragna- կամ *Vrθragna-, որոնք համապատասխանում են Ավեստայի Vərəθraγna-ին, տե՛ս FIr. II, p. 459:

խա¹⁰: Արամազդը, ինչպես և Զևսը, ամպրոպային բնույթ է ունեցել՝ ըստ խորենացու (Բ.ձդ), Նուենե Մցխեթում «կործանեաց ամպրոպային պատկերն Արամազդայ»¹¹: Խեթական մի արձանագրության մեջ (KUB XXXVIII 12) հիշվում է Կուլմախայի ամպրոպի աստվածը՝ դադափարադիրը՝ ԴՄ¹²: Կուլմախա տեղանունն անբաժանելի է սեպագիր աղբյուրների Kummel/Kummu/ Qumenu և Kummanni/ Kummuni ձևերից՝ այդպես էին կոչվում խեթախուռուհական ամպրոպի աստծու Թեշուբի (ուրարտ. Թեյշեբա) պաշտամունքի կենտրոնները (առաջինը Կորդվաց Արարատ լեռան շրջանում, երկրորդը՝ Կապադոկիայում)¹³: Այսինքն, Կուլմախայի ամպրոպի աստվածը պիտի լիներ Թեշուբի մի տեղական տարբերակը, որը և կարող է դիտվել որպես «ամպրոպային» Արամազդի հնագույն նախորդը:

Ուշ խեթական մի աղբյուրում հիշվում է մի արևմտասեմական առասպել, ըստ որի «երկրի արարիչ» էլ աստծու կույարանը գտնվում է Եփրատի ակունքներում¹⁴: Նա դերագույն աստված էր, տիեզերքի և ամենայն գոյի արարիչը, աստվածների հայրը, նահապետն ու արքան, որն այդ տարածքներում պետք է նույնացվեր Հայաստյի դերագույն աստծուն՝ Արամազդի նախատիպին (այս մասին տես ստորև):

Արամազդը համարվել է «արարիչ երկնի և երկրի» և «հայր դիցն ամենայնի» (Ագաթանգեղոս § 68, 785), որով նորից համապատասխանում է արևմտասեմական էլին, ասլա և այլ մեծ աստվածների, շումերաքադապան Ան(ու)ին և այլն (աքեմենյան արքաների արձանագրություններում երկնքի և երկրի ստեղծող է համարվում Աուրամազդան)¹⁵: Անի ամրոցում է եղել հին հայոց արքաների գերեզմանոցը (Ագաթանգեղոս § 785, Փավստոս Գ.ժա, Դ.իր, Խորենացի Գ.ժ, իե): Ըստ այգմ, Արամազդը, աստվածների նահապետն ու թերևս արքան, առնչվել է արքայատոհմի, ասլա և անդրաշխարհի հետ: Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ Արամազդը

¹⁰ Ա. Քոսյան. Անի-Կամախը խեթական դարաշրջանում. — ՊԲՀ, 2002, № 3, էջ 225-226: Կարծում են, որ Դարանադյաց Անի ամրոցը մ.թ.ա. IV-I դդ. Փոքր Հայքի կենտրոնն էր: XI-XII դդ. Անի ամրոցը չի հիշատակվում՝ հիշվում է Կամախը, որը կոչվել է նաև Անի-Կամախ, մայրաքաղաք Անիից տարբերելու համար (Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բասիլյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. Հ. 2. Երևան, 1988, էջ 913): Բայց Կամախ տեղանունն ավանդված է ավելի վաղ արդեն 680 թ. տիեզերական ժողովի մասնակիցների մեջ հիշվում է «Դարանադիլի կամ Կամախի» եպիսկոպոսը (H. A. D. o. n. c. Armenia в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 53, 364):

¹¹ Խոսքը վերաբերում է վրացական Արմազի աստծուն: Վրացագիտության մեջ վերջինս միարժեքորեն չէ, որ նույնացվում է հայոց Զևս-Արամազդին՝ նրա ծագման վերաբերյալ կան այլևայլ կարծիքներ (տե՛ս օրինակ А. И. Б о л т у н о в а. К вопросу об Армази. — "Вестник древней истории", 1949, № 2), բայց Արմազի-Արամազդ կապը դժվար է վիճարկել:

¹² Մեկ այլ արձանագրությունից էլ (KUB LV 1)՝ Հայտնի է Կուլմախայի Պիրվա աստվածը, տե՛ս Ա. Քոսյան. նշվ. հոդվ., էջ 233-235: Հասկանալի է, որ Պիրվան էլ, հավանաբար, կապված է ամպրոպի աստծու հնդեվրոպական անվան հետ (հմտ. սլավ. Перунъ), տե՛ս В. И в а н о в. К этимологии балтийского и славянского названий бога грома. — "Вопросы славянского языкознания", 1958, № 3, с. 110.

¹³ Կուլմախան անվանաբանորեն համարվել է Թեշուբի պաշտամունքի կենտրոնների հետ Գ. Ղափանյանի կողմից՝ տե՛ս Г. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. 1, с. 50:

¹⁴ H. H o f f n e r. Hittite Myths. Atlanta, 1990, p. 69.

¹⁵ R. G. K e n t. նշվ. աշխ., էջ 137, 138:

միշտ Ջևս է, բայց նրա Անիի բազիլը վերագրվում է Ջևսի հորը՝ Կրոնոսին¹⁶, որին, թերևս որպես Տարտարոս-անդրաշխարհ նետված աստվածների հոր, ավելի պատշաճ է թվացել համապատասխանեցնել Արամազդի՝ աստվածների հոր, արքայական դերեցմանների մոտ դտնվող մեհյանը: Սրան համահունչ է աստվածների արքա Թեշուրի կապը խեթական արքաների հետ, ապա անհետացումն ու այցն անդրաշխարհ¹⁷: Ընդհանրապես, գերադույն աստվածները կարող են լինել «երեք աշխարհների» երկնքի, երկրի և ստորերկրյա անդրաշխարհի տիրակալներ: Արամազդի հետ համադրված հունական Ջևսը համարվել է նաև անդրաշխարհի տիրակալ, և Հադեսն ինքը, որպես այդպիսին, Ջևսի մի հիպոստասիսն է, նրա բարդ կերպարի մի ասպեկտը¹⁸: Այսպիսով, Արամազդը համատեղել է արարիչ աստծու, աստվածների հոր, ամպրոպի աստծու, ապա և անդրաշխարհի աստծու հատկանիշները: Հավանական է, որ Արամազդի այս բարդ կերպարը ձևավորված լինի մի քանի տեղական նախատիպերի միահյուսման արդյունքում:

Կուամախան, հավանաբար, դուրս է եղել Հայաստանից կամ դրա մեջ է ընդգրկվել միայն որոշ դարաշրջաններում¹⁹: Բայց Կամախի պաշտամունքն անբաժանելի է Բարձր Հայքի հարևան՝ Եկեղյաց և Դերջան գավառների պաշտամունքներից, որոնց հետ այն մեկ ամբողջություն է կազմում և հնում պետք է որ մեկ միասնական էթնոմշակութային համայնքի մեջ մտնեն: Իսկ այդ երկուսի տարածքը հնում եղել է Հայաստանի կազմում: Կուամախայի ամպրոպի աստվածն էլ հար և նման պիտի լինեն Հայաստանի ամպրոպի աստծուն կամ աստվածներին: Ավելին, Կուամախայի՝ Հայաստանից դուրս դտնվելը չի բացառում, որ նրա աստվածը գոնե երբեմն ընդգրկված լինեն Հայաստանի աստվածների կազմում: Որպես դուրահեռ հիշենք, որ ուրարտական դիցարանի առաջին երկու աստվածների՝ Խալդիի և Թեյշեբայի պաշտամունքների կենտրոնները դտնվում էին Ուրարտուի սահմաններից դուրս:

3. Անահիտի պաշտամունքի կենտրոնն էր Եկեղյաց գավառի Երեզ ավանը (հնում՝ Երէզ, Երիզա, հետագայում՝ Երզնկա): Խեթական դարաշրջանում Կուամախանի քաղաքը պաշտամունքի կենտրոնն էր ոչ միայն Թեշուրի, այլև նրա կնոջ՝ Խեբատ դիցուհու²⁰: Անտիկ աղբյուրներում Կուամ-

¹⁶ V. L a n g l o i s. Agathange. Histoire du règne de Tiridate et de la prédication de Saint Grégoire l'Illuminateur. – Collection des historiens anciens et modernes de l'Arménie. T. 1. Paris, 1867, § 32. Այս մասին տես և Ա. Կ ա ղ ի է ռ. Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Մ. Խորենացույ համեմատ. Վիեննա, 1899, էջ 25, ծանոթ. 2: Ագաթանգեղոսի նորահայտ հունարեն տարբերակում նորից Ջևս է՝ տե՛ս Հ. Բ ա ղ թ ի կ յ ա ն, Ա. Տ ե ռ - Ղ ե ո ն դ յ ա ն. Ագաթանգեղոսի պաամության հունական նորահայտ խմբագրությունը (վարք). – «Էջմիածին», 1966, № Թ-Ժ, § 110:

¹⁷ H. H o f f m e r. Նշվ. աշխ., էջ 20 ff.

¹⁸ Мифы народов мира. Т. 1, М., 1980, с. 51.

¹⁹ Ա. Ք ո ս յ ա ն. Նշվ. հոդվ., էջ 237:

²⁰ Այսպես, խեթական մի արձանագրության մեջ (KUB VI 45) հիշվում են Կուամախանի ամպրոպի աստվածը (այսինքն՝ Թեշուրը), Կուամախանի Խեբատը, šinapši ամպրոպի աստվածը, šinapši Խեբատը, տե՛ս A. G o e t z e. Kizzuwatna and the Problem of Hittite Geography. New Haven, 1940, p. 6, n. 22. V. H a a s. Geschichte der hethitischen Religion. Leiden, New York, Köln, 1994, S. 580:

մաննին հիշվում է որպես կապադովկյան Կոմանա²¹: Կապադովկյան և պոնտական Կոմանաները նշանավոր էին Արտեմիս Տավրոպոլոսի պաշտամունքով (Ստրաբոն XII.2.3, 32, 36), որը և պետք է ծագած լիներ Թեշուբի կնոջ կերպարից: Ըստ Պրոկոպիոս Կեսարացու (*De bello Gothico*, IV.5; *De bello Persico*, I.17), այդ քաղաքների Արտեմիսը նույնական է եղել Հայոց Անահիտին, իսկ Հայերի հավաստամբ պաշտամունքները ծագել են Եկեղյաց գավառի Անահիտից: Կապադովկյան Կոմանան էլ հեղինակին զարմանալի կերպով հիշեցրել է Անահիտի կենարոնը Եկեղյաց գավառում²²:

Արտեմիսի Ταυροπόλος, Ταυροπόλα մակդիրն իմաստավորվում է ըստ τᾱυρος «ցուլ, եղ» բառի, որպես «եզների վրա գնացող», որը Ղրիմի համահունչ կոչման պատճառով վերաիմաստավորվել է որպես զրիմյան տավրացիներից պաշտվող: Ցուլը տարածաշրջանի բոլոր ամպրոպի աստվածների, այդ թվում՝ Թեշուբի կենդանական սիմվոլն էր. Թեշուբի կինն էլ պետք է ներկայացվեր կովի տեսքով²³: Հնդեվրոպական շատ ավանդույթներում ևս (օրինակ՝ հունական, լատինական, սլավոնական և այլն) ցուլը կապվում է ամպրոպի աստծու հետ. սա բնորոշ է եղել թերևս հենց հին հնդեվրոպական առասպելաբանությանը²⁴: Պլուտարքոսը (*Lucullus*, 24) հաղորդում է, որ երբ Լուկուլլոսն անցնում էր Մեծ Հայք, Եփրատի արևելյան ափին աղատ արածում էին միայն զոհաբերության համար նախատեսված կովեր՝ նվիրված սլարսկական Արտեմիսին (= Անահիտ), որին տեղացիները բոլոր աստվածություններից բարձր են դասում:

Պրոկոպիոսը (*De bello Gothico*, IV.5) և Եվստաթիոսը (*Comment. ad Dionys. 694*) Կոմանան կոչում են Քրոսի «Ոսկե»: Այս մակդիրները դիցունհու և նրա պաշտամունքի կարևոր բնորոշիչներ են: Անահիտի արձանը եղել է ոսկի, և նա կոչվել է «ոսկեմայր, ոսկեծին, ոսկեհատ» (Ագաթանգեղոս § 786, 809):

Արամազդը համարվել է մյուս աստվածների, այդ թվում՝ Անահիտի Հայրը (Ագաթանգեղոս § 53, 785): Բայց եղել է նաև մեկ այլ պատկերացում «Հայսմավուրքում» Անահիտը հիշվում է որպես Արամազդի կինը: Արամազդի և Անահիտի միացյալ տոները պետք է տեղի ունենային Ամանորին և հաջորդ օրերին²⁵: Այս պատկերացումը, ակնհայտորեն, ավելի հին

²¹ A. G o e t z e. նշվ. աշխ., էջ 5f.; G. L e l M o n t e, J. T i s c h l e r. Die Orts- und Gewässernamen der helhitischen Texte. Wiesbaden, 1978, S. 221.

²² Այս տեղեկությունների վերաբերյալ տե՛ս և Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 273 և Հ. Գ ե յ ց ե թ. նշվ. աշխ., էջ 50-53:

²³ I. D i a k o n o f f. Evidence on the Ethnic Division of the Hurrians.— “Studies on the Civilization and Culture of the Hurrians”, Winona Lake, Indiana, p. 83.

²⁴ Мифы народов мира. Т. 1, с. 203.

²⁵ Այսպես, Գրիգոր Լուսավորիչը Սուրբ Կարապետի եկեղեցին հիմնելուց հետո «սահմանեաց ամ յամէ աշխարհածողով և թագաւորական տօն լինել, որ օր մուտ է նաւաորդի ամսոյ, որ է օգոստոսի ժա: Եւ զի այնմ աւուր տօնէին հայք ի կոապաշտութիանն՝ արամազդայ և անահայ...» (Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելադոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր-Բարայելի. Կոստանդնուպօլիս, 1834, էջ 72): Նավասարդի 15-ի Աստվածածնի տոնի առթիվ ասվում է, որ այդ օրը Դրիգոր Լուսավորիչը «կործանեաց զիզական պատկերն Անահայ զկնոջն Արամազդայ և խափանեաց զգարչելի տօն նոցա» (այս հարցի շուրջ տե՛ս և Կ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. Անահիտ դիցունհու պաշտամունքը. Երևան, 1963, էջ 135-136):

է՝ Արամազդ-Անահիտ զուգը համադրելի է, այսպիսով, Թեշուբին և նրա կնոջը՝

Անահիտ անունը հանգում է իրանական Անահիտային, բայց վերջինիս կերպարը, որն, ի հակադրություն մյուս աստվածների, միակն է հին իրանական կրոնում, որ ներկայացված է մարդակերպ, ծագմամբ բացահայտորեն իրանական չէ: Հնարավոր է, որ իրանական չէ նաև նրա անունը: Ինչևէ, այդ կերպարը ստեղծվել է իրանցիների դրաված երկրների մեծ դիցուհիների, հատկապես միջագետքյան իշտարի ազդեցությամբ²⁶: Հետաքրքիր է նշել, որ Արտեմիսը, որի հետ հաճախ նույնացվել է իրանական Անահիտան, փոքրասիական, հավանաբար, խուռուրարտական ծագումով դիցուհի է²⁷: Ստրաբոնը (XI.14.16) շեշտում է, որ Արտեմիս-Անահիտի ամենամեծ պաշտամունքը եղել է հայոց մեջ. Եկեղյաց գավառում և այլուր: Նույնիսկ ամենազնվազարմ հայերը նրան են նվիրաբերել իրենց դուստրերին, որոնք երկար ժամանակ վաճառել են իրենց մարմինը դիցուհու տաճարում, ապա միայն ամուսնացել: Անահիտի պաշտամունքը վերափոխվել է Արշակունյաց դարաշրջանում, երբ ուժեղացել է պարթևական ազդեցությունը՝ Տրդատ արքան նրան ներկայացնում է որպես «մայր ամենայն զգաստութեանց» և «ծնունդ մեծին արին Արամազդայ» (Ազաթանդեղոսի § 53): Սա համեմատելի է իրանական Անահիտայի և հունական Արտեմիսի, բայց ոչ Ստրաբոնի նկարագրած հայոց Անահիտի հետ:

4. Վահագնը բարդ կերպար է: Ազաթանդեղոսի գրքում նա հայոց մեծ աստվածներից մեկն է, իսկ ըստ Խորենացու՝ Տրդատ արքայի երրորդ որդին: Նա սովորաբար նույնացվել է Հերակլեսին, բայց սրուշ հին ազգյուրներում ներկայացվում է որպես արևի աստված: Փիլոն Եբրայեցու «Վասն տասներանեան օրինացի» հայերեն թարգմանության մեջ ասվում է՝ «Քանզի կոչեն ոմանք ... զհուր Հեփեստոսն և արեդակ(ա)ն զՎահագն», իսկ ավելի ուշ դարերի դործ «Տոնական մասեսնում»՝ «ոմանք զարեդակն պաշտեցին և Վահագն կոչեցին»²⁸: Տրդատ արքայի խոսքում հիշվող Արամազդ, Անահիտ, Վահագն աստվածային եռյակը (Ազաթանդեղոս § 127) համապատասխանում է իրանական Աուրամազդա, Անահիտա, Միթրա եռյակին, ուր Վահագնը հանդես է գալիս իրանական արևային Միթրայի փոխարեն (ի միջի այլոց, ուրարտական արևի աստված Շիվինին էլ գիցարանի երրորդ աստվածն էր):

Վահագնը ռազմի աստված էր (հմտ. Տրդատ արքայի խոսքը՝ «Քաջութիւն հասցե ձեզ ի քաջէն Վահագնէ» (Ազաթանդեղոս § 127): Նա նաև «վիշապաքաղ» էր, որը կովում և հաղթում է վիշապներին (Խորենացի

²⁶ М. Б о й с. Նշվ. աշխ., էջ 76; И. В. Р а к. Мифы древнего и раннесредневекового Ирана. СПб.-М., 1998, с. 448. Elr. I. p. 1005-1006:

²⁷ V. V. I v a n o v. Comparative Notes on Hurro-Urartian, Northern Caucasian and Indo-European (հղվում է ըստ ձեռագրի. աշխատությունը ստորագրված է՝ UCLA Indo-European Studies. Vol. I, Los Angeles, p. 147-264): Արտեմիսի որսասամունքի փոքրասիական լյուգիական և լյուկիական կոսպերի վերաբերյալ տես և W. B u r k e r t. Greek Religion. Oxford, 1985, p. 149.

²⁸ Այս նույնացման վերաբերյալ տես նոր հայկական բառարան. հ. 2, Վեներաի, 1837 (Երևան, 1981), էջ 771: Ղ. Ա լ ի շ ա ն. Նշվ. աշխ., էջ 293: Մ. Ա բ ե դ յ ա ն. Երկիր. հ. Ա, Երևան, 1966, էջ 75, հ. Ը, Երևան, 1985, էջ 101:

Այլ): Վահագնի իրանական համապատասխանությունը՝ ավեստ. Vərəθraϥna-ն դիցանուն է, որը որպես մակդիր կիրառվել է Փրկչի, Հաոմա աստվածություն, Թրաետաոնա հերոսի և նրա զենքի համար: Հին Հնդկաստանում իրանական Վրրըթրադնայի ստուգաբանական կրկնակ Vritrahan «Վրտրա վիշապին սպանող» կոչումը ամպրոպի աստված Ինդրայի սովորական մակդիրն է, բայց այդպես է կոչվել նաև այն ամենը, ինչ հաղթական է իր բնույթով՝ օրինակ, Ագնի, Սոմա, Սարասվատի աստվածները: Ելնելով այս համադրությունից, Վահագնը երբեմն համարվել է Ինդրավարահանի կրկնակը²⁹: Բայց Վրրըթրադնան «վիշապաքաղ» չէ և այս հայ-հնդկական ուղղակի համադրությունը, որը հաշվի չի առնում իրանական փաստերը, մեթոդաբանորեն խոցելի է: Վահագնի արևային աստվածություն լինելն են շեշտում երկու հանդամանք. 1. Վահագնի կերպարի քրիստոնեական ժառանգն էր Հովհաննես Մկրտիչը (սուրբ Կարապետ, որի վանքը կառուցվեց Վահագնի տաճարի մերձակայքում), իսկ վերջինս արևելաքրիստոնեական ավանդույթներում ձեռք է բերել արևային աստծու հատկանիշներ³⁰, 2. ըստ լեգենդի, հենց արևն է ոչնչացնում վիշապներին³¹:

Վահագնին նվիրված հիմնի հատկապես սկիզբը՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն ծիրանի» համարվում է հնդեվրոպական բանաստեղծության մի վառ արտահայտված օրինակ³²: Այսինքն, Վահագնի կերպարի դոնե այս ընդհանրիչ ծագումը բնիկ հայկական է համարվում: Լավագույն դուրահեռներն ի հայտ են գալիս հին հնդկական վեդաներում³³, ըստ մի հիմնի՝ (Ռիգվեդա, X.45.1), կրակի աստված Ագնին նույնպես ծնվում է երկնքում, երկրի վրա և ծովում (այդ տեղայնացումներով նա հանդես է գալիս որպես, համապատասխանաբար, կայծակ, զոհաբերություն կրակ և արև)³⁴: Այս հատկանիշներով Ագնին ուղղակի նույնանում է Վահագնին, որին ուսումնասիրողները համարել են արևի, կրակի կամ ամպրոպ-կայծակի աստված (այսպիսով, Վահագնը, ինչպես Ագնին, Թերևս համատեղել է այդ գործառույթները)³⁵: Մյուս կողմից, «Վահագնի երգի» պատկերը լավագույնս համապատասխանում է հին շումերական մի

²⁹ Այս աեսակետն առաջին անգամ արտահայտել է Մ. Էմինը, տե՛ս Н. О. Э м и н. Вахагн-Вишапаках' армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды. — "Исследования и статьи Н. О. Эмина", М., 1896:

³⁰ Мифы народов мира. Т. 1, с. 553.

³¹ Գ. Ս Ր Վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկիր. Հ. 1, Երևան, 1978, էջ 69:

³² В. И в а н о в. Использование для этимологических исследований однокоренных слов в поэзии на древних индоевропейских языках. — "Этимология, 1967", М., 1969. ն ու յ ն ի՝ Выделение разных хронологических слоев...

³³ Այդ մասին առաջինը և լավագույնս գրել է Մ. Էմինը, տե՛ս Н. О. Э м и н. Նշվ. աշխ., էջ 82-83:

³⁴ G. N a g y. Greek Mythology and Poetics. Ithaca and London, 1990, p. 99 ff.

³⁵ Այս մասին տե՛ս G. A r e s h i a n. Armenian and Indo-European Cosmogonic Myths and Their Development. — "Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics". Delmar, New York, 1992, p. 7 ff. տե՛ս և Ս. Հ ա Ր ու Թ յ ու Ն յ ա ն. Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ 83-84: А. Е. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 38-44:

դեմոնի՝ Ասագի նկարագրությունը, որը կարող է դիտվել որպես Հնդեվրոպական-չուլմերական հնագույն շփումների վկայություն³⁶:

Վահագնը պաշտվում էր Տարոնում (Հնում՝ Տարան), Քարքե լեռան (Քարքէ) վրա գտնվող տաճարական համալիրում, որի մերձակայքում հետագայում կառուցվեց Սուրբ Կարապետի վանքը: Այս տեղանունները պարզորոշ համապատասխանություններ ունեն Հնդեվրոպական վիշապամարտիկ աստվածների հետ կապված սրբավայրերի անվանումներում (հմտ. օրինակ, լեհ. Krakow)³⁷: Տարանը համադրելի է խաթական ամպրոպի աստված Taru-ի անվանը (հավանաբար Հնդեվրոպական ծագման, տե՛ս ստորև), որը խեթերենում հայտնի է Tarawa- ձևով: Այդ դեպքում Վահագնը նաև Տարուի ժառանգորդն է: Մյուս կողմից, հնարավոր է, որ նա շարունակում է այս տարածքների հնագույն Շուբրիա երկրի ամպրոպի կամ ուրարտական արևի աստված Շիվինիի պաշտամունքները³⁸: Վահագնի կերպարը համադրելի է Հնդեվրոպական «երրորդ հերոսին» (նա երրորդ անդամն էր հիշյալ դիցաբանական եռյակի, նրա հիմնը եռամաս էր, նա պաշտվում էր եռամաս տաճարական համալիրում, Անահիտի և Աստղիկի հետ մեկտեղ, նրան էր նվիրված ամսվա 27-րդ /— 3X3X3/ օրը և այլն): Սա հիմք է հանդիսացել Վ. Տոպորովի համար կարծիք հայտնելու, որ նա կարող էր ծագել հայաստանի Terittitunni աստծուց, որի անվան սկիզբը համադրելի է Հնդեվրոպական *trei- «երեք» արմատին³⁹:

5. Միհրի վիպական ժառանգներն են «Սասնա ծռերի» Մեծ և Փոքր Մհերները: Էպոսի ավարտին Փոքր Մհերը մտնում է Վանա ժայռի «Մհերի դռնից» ներս և հետագայում պետք է վերածնվի այնտեղից: «Մհերի դռուն» իրականում ժայռին փորադրված մի մեծ ուրարտական արձանագրություն է, որտեղ հիշվում են ուրարտական դիցաբանի աստվածները և նրանց մատուցվող զոհաբերությունները: Արձանագրության սկզբում ասվում է, թե այդ «դարպաս(ներ)ը»՝ գաղափարագիր՝ KA, KA^{ME3}, այսինքն՝ ժայռի մեջ փորված հարթ ուղղանկյուն մակերեսին գրված արձանագրությունը, նվիրվում է ինչպիսի աստծուն⁴⁰ (այսօրինակ «Խալդիի դարպասները» ուրարտական ամենատարածված պաշտամունքային կառույցներն են)⁴¹: Ըստ Ի. Դյակոնովի, դա անկասկած նշանակում է, որ հին Հայաստանում ինչպիսի նույնացվել էր Միթրա-Միհրին: Միթրասի՝ արևմտյան Միթրայի պաշտամունքը, այն տեսքով, որով հասել էր Հռոմ մ.թ.ա. I դ., ոչինչ

³⁶ А. Е. Петросян. Նշվ. աշխ., էջ 43. Ա. Պետրոսյան. Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ.— ՊԲՀ, 2003, № 2, էջ 198-202:

³⁷ В. В. Иванов, В. Н. Топоров. Мифологические географические названия как источник для реконструкции этногенеза и древнейшей истории славян.— «Вопросы этногенеза и этнической истории славян и восточных романцев». М., 1976, с. 123; А. Е. Петросян. Նշվ. աշխ., էջ 165:

³⁸ А. Е. Петросян. Նշվ. աշխ., էջ 143, 156:

³⁹ В. Топоров. Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции.— ИФЖ, 1977, № 3, с. 105.

⁴⁰ Н. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 44 (КУКН 38, 1-2).

⁴¹ Ս. Հմայայան. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 67:

չունենք ընդհանուր ղրադաշտական իրանի Միթրայի հետ, բացի անունից: Հռոմեական Միթրասի բոլոր հիմնական հատկանիշները (ծնունդը ժայռից, պաշտամունքը որմնախորշերում կամ քարայրներում, կապն առյուծի հետ և այլն) հասնում են մինչև Խալդի, բայց ոչ ավելի արևելք⁴²:

Խալդիի, Միթրասի և Մհերի կապերը ակնհայտ են: Խալդիի սիմվոլն է համարվում առյուծը: Միթրասի պաշտամունքում հայտնի են առյուծագլուխ արձանիկներ (միթրաիզմում կար նվիրագործության յոթ աստիճան, որոնցից չորրորդը կոչվում էր ԼԵՍ «առյուծ»⁴³), իսկ Սասունի էպոսի Մեծ Մհերը կոչվում է Առյուծ, կամ Առյուծածև Մհեր: Նա, ի միջի այլոց, սպանում է Սպիտակ դևի Սև ցլին, որը համեմատելի է Միթրասի «ցլասպան» կերպարի և ուրարտական արվեստում տարածված առյուծի ու ցլի կովի մոտիվի հետ: Խալդիի պաշտամունքի կենտրոն Մուծածիր քաղաքը նրա տիրակալ Ուրգանայի կնիքի մակագրության մեջ նկարագրվում է որպես «աղուավի քաղաք» (ըստ Ֆ. Թյուրո-Դանթենի ընթերցման)⁴⁴: Արևմտյան միթրաիզմի նվիրագործության առաջին աստիճանը կոչվում էր Corax «ագռավ», իսկ Փոքր Մհերն աղուավի առաջնորդության մտնում է Վանա ժայռի «Աղուավու քարի» Մհերի գուռ/ Խալդիի դարպասից ներս: Խալդիի հետ կապված տոն և գոհաբերություններ են հիշվում խաղողի այգիների հիմնման առնչությամբ⁴⁵ (նա հավանաբար նաև խաղողագործության և գինեգործության հովանավորն է եղել): Որոշ պատկերներում Միթրասը ծնվում է ժայռից՝ ձեռքին խաղողի ողկույզ⁴⁶, Մեծ Մհերը Մարում յոթ տարի է անցկացնում գինովցած վիճակում, իսկ Փոքր Մհերը, մինչև հոր վրեժը լուծելը, իր պատանի հասակակիցների հետ գինարբուքով է զբաղված լինում:

Միհրը ներկայացվել է որպես հուր և Հեփեստոս, իսկ Ագաթանգեղոսի նորահայտ հունարեն խմբագրության մեջ՝ Դիոնիսոս (խաղողի և գինու աստված)⁴⁷: Այս նույնացումները բնորոշ չեն իրանական Միհրին, որը և առանձնացնում է հայկական այս աստծուն: 1995-ին Վանից ոչ հեռու Հայտնաբերված վահանի պատկերում Խալդիի մարմնից կրակի բոցեր են ելնում⁴⁸, ինչը թույլ է տալիս նրան ևս համարել հուր-կրակի աստված: Միհրի մեհյանը գտնվում էր Դերջան գավառի Բագայառիճ գյուղում: Այս գավառը թերևս նվիրված էր Միհրին, ինչպես հարևան Եկեղյաց և Դարանազի գավառները Անահիտին ու Արամազդին: Դերջանում, Բագայառիճից արևելք, հիշվում է Խաղտոյ առիճ դյուղը: Միհրի պաշտամունքի շրջանի Խաղտոյ առիճը, որպես Բագայառիճին գոլգոթա մի անվանում, կարող է վերագրվել Միհրի տեղական հին համապատասխանությունը: Սա միան-

⁴² И. М. Дьяконов. К вопросу о символе Халди. — «Древний Восток», 4, Ереван, 1983, с. 191-193.

⁴³ F. Cumont. The Mysteries of Mithra. New York, 1956, p. 152.

⁴⁴ F. Thureau-Danigian. Une relation de la huitieme compagne de Sargon (714 av. J.-C). Paris, 1912, p. XII.

⁴⁵ Н. Арутюнян. Նշվ. աշխ., էջ 45 (КУКН 38, 27-28), 103 (КУКН 82):

⁴⁶ F. Cumont. Նշվ. աշխ., էջ 131:

⁴⁷ Հ. Բարթիկյան, Ա. Տեր-Ղևնդյան. Նշվ. աշխ., § 115:

⁴⁸ O. Belli. The Anzaf Fortresses and the Gods of Urartu. Istanbul, 1999, p. 37-41, fig. 17.

գամայն համահունչ է Վանի ժայռի Խալդի-Մհեր համադրութայնը: Այսինքն, Հայաստանի հյուսիսարևմուտքում ևս Միհրը կապվել է *xald/i-* անվանաբանական տարրի հետ⁴⁹:

6. Հայոց մեջ Տիրը նույնացվել է հունական Հերմեսի և Ապոլոնի հետ (Հայաստանից դուրս նրանց հետ նույնացվել է Միթրան): Նրա մեհյանը դտնվում էր Արտաշատի մոտ, Երագամոյն կոչված տեղում և պաշտամունքն էլ բնութագրվում է որպես «երագացոյց երագահան» (Ագաթանգեղոս § 778): Նա հիշվում է որպես «դպիր փիտուլթեան քրմաց» և «գրիչ Որմգրի», այսինքն՝ Արամագրի գրագիր: Տիրն այստեղ կապվում է ուշ իրանական Որմիգրի, և ոչ Հայոց Արամագրի հետ: Սա կարող է մատնանշել Տիրի ուշ փոխառությունը: Բայց այս աստվածը նույնպես հին, նախաիրանական արմատներ ունեւր Հայաստանում: Նախ, նրա բնութագրերը հիշեցնում են հունական Հերմեսի կերպարը՝ Հերմեսը, մեռյալների հոգիները անդրաշխարհ տեղափոխողը, նաև երագների տեղափոխող է (Ուիսական, XI.222), իսկ մարդու հոգին մեռնելիս հեռանում է երագի պես (Հերմեսի հոմերոսյան հիմն, 14): Այս Հայ-հունական զուգահեռն արդեն ցույց է տալիս Հայոց Տիրի ոչ իրանական արմատները: Մյուս կողմից. «Գրիչ» աստվածը պետք է կապվի Հայ բանահյուսութայն մեջ բախտի և մահվան հրեշտակ Գրողի, այսինքն՝ ճակատագրի գիրքը գրողի հետ, որը համադրվել է քրիստոնեական Գաբրիել հրեշտակապետին⁵⁰: Վերջինս կարևոր գերունի նաև վիպական ավանդություն: Նա է վերցնում Մեծ Մհերի հոգին, ապա իրականացնում Փոքր Մհերի պատիժը՝ գարձնում է նրան անժառանգ և հաղթում Մհերի կրկնակ Ասլան աղային⁵¹: Նույնիսկ կարելի է ասել, որ վիպական շարքի վերջում մարտադաշտը մնում է Գաբրիել հրեշտակին:

Իրանական Տիրի կերպարը ծաղում է բաբելոնյան Նաբուից՝ գերագույն աստված Մարդուկի գրագրից⁵²: Իսկ Գրողը համապատասխանում է ուրարտական չորրորդ աստված Խուտուինին, որի անունը սլետք է կապվի խուռ. *hute* «գրել» արմատին (հմտ. խուռիական ճակատագրի աստվածուհիների *Hutena* և *Hutellura* անունները⁵³ (հին Միջագետքում անդրաշխարհի գրագիրները կանացի կերպարներ էին): Հատկանշական է, որ ուրարտական դիցարանի չորրորդ աստվածուհու, որը կարող է դիտվել որպես Խուտուինիի զուգորդը, անունն է *Awi* «Ստորերկրայք»⁵⁴:

⁴⁹ Մյուս կողմից, Խալդոյ առիճը պետք է կապվի այս տարածքների Խալդ- արմատով կաղմված ցեղատեղանուններին, հմտ. Խալտիք, ուրարտ. *Halitu* (= Խալտո), հուն. *χάλδοι*. այս հարցի վերաբերյալ տե՛ս A. E. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 101-102. Ա. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության վերնախավի ծագման խնդիրը. - ՊՐՀ, 2002, № 2, էջ 265-266: A. E. П е т р о с я н. Армянский Мхер, западный Митра и урартский Халди. - Հայկական «Սասնա Մուեր» էսոթոսի և համաշխարհային էսթիկական ժառանգությունը. Երևան, 2004, էջ 49, 52-54:

⁵⁰ Տե՛ս հատկապես Ս. Հ ա Ր Ո Ւ Թ յ ո Ւ Ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 404-409:

⁵¹ Նույն տեղում, էջ 410-416:

⁵² M. Б о й с. Նշվ. աշխ., էջ 77:

⁵³ Ս. Հ ա Ր Ո Ւ Թ յ ո Ւ Ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 47-48:

⁵⁴ И. М е щ а н и н о в. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л., 1978, с. 71-72.

7. Նանեի (Նանէ) մեհայանը գտնվել է Եկեղյաց թիլ ավանում, Անահիտի պաշտամունքի կենտրոն Երիզա ավանի դիմաց, Գայլ գետի մյուս ափին: Սրբավայրերի իրար մոտ գտնվելը պետք է արտացոլեր նաև կերպարների որոշ ընդհանուր բնութագրեր: Նանայա դիցուհու, որի անունից է ծագում հայ. Նանէն, պաշտամունքը հայտնի էր Հին Միջագետքում, ապա և՛ Սիրիայում, և՛ Իրանում, ուր սլաշայանվել էր մինչև Սասանյան ժամանակները: Հին Միջագետքից հայտնի է նաև Նանա դիցուհին, և այս համահունչ անունները, հավանաբար, հետագայում բաղարկվել են իրար հետ: Երկու դիցանուններն էլ ծագումով, թերևս, շումերական են⁵⁵: Նանեի ավանի թիլ անունը սեմական է (հմտ. աքադ. Tīlu «բլուր», որը տարածաշրջանի տեղանունների հաճախ հանդիպող հիմքերից է⁵⁶ (Նանէ և թիլ ձևերը առաջացել են հայերենում վերջին ձայնավորի կանոնավոր անկմամբ):

Հիշելով միևնույն կենտրոններում տեղայնացվող տարածամանակյա գլոցաբանական կերպարների նույնացման երևույթը, նշենք, որ ըստ Ստրաբոնի (XII.3.37), Պոնտոսի Զելա քաղաքն իր Անահիտի տաճարով կոնոցված էր Սեմիրամիսի (Շամիրամ) բլուրի վրա, իսկ հայկական աղբյուրներում թիլ-«բլուրների» արարումը վերագրվում է Շամիրամին⁵⁷: Այսինքն՝ մի կողմից Նանեն համապատասխանել է Հին փոքրասիական դիցուհի Արտեմիս-Անահիտին, իսկ մյուսից միջագետքյան վիսպական Սեմիրամիս-Շամիրամին:

8. Բարշամիսի տաճարը գտնվում էր Անի-Կամախից ոչ հեռու, Թորգան գյուղում: Այս իրար մոտ գտնվող պաշտամունքները նույնպես ինչ-որ ընդհանրություններ պիտի ունենային: Հայոց միակ աստվածն է, որը չի հիշվում հունական անունով ո՛չ հայ աղբյուրներում, ո՛չ էլ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ: Անունը ծագում է արևմտասեմական Ba'al Samin-ից («երկնքի տեր»): Ագաթանգեղոսի մոտ (§ 784) նա կոչվում է «սպիտակափառ», իսկ ըստ Խորենացու (Բ.ժդ), նրա «սպտկերը», որն «ի փղոսկր է և ի բիւրեղ է կազմեալ էր արծաթով», Տիգրան արքան է Միջագետքից տեղափոխել Թորգան: Բայց, ինչպես կտեսնենք, արևմտասեմական Բա՛ալը և թերևս նրա իգական տարբերակը հիշվում են այս շրջանում արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից և Բարշամիսի սպտկերի հաստատումն այստեղ սլեք է հիմնվել տեղի Հին պաշտամունքի վրա, և ոչ հիմք գառնալ նորի համար (ինչպես որ Արամաղդի, Միհրի, Նանեի հունական արձանների հաստատումն այս շրջանում պետք է ոչ թե ժխտեր, այլ զարգացներ ու հելլենիստական բնույթ տար տեղի հնագույն պաշտամունքներին): Հայոց ազգածին ավանգուծյան մեջ (Խորենացի Ա.ժդ) Բարշամիսը հանգես է գալիս որպես Արամ նահապետի հակաակորդ Բարշամ, որին, Արամի կողմից սպանվելուց հետո, «աստուածացուցեալ պաշտեցին Ասորիքս ժամանակս յոլովս»:

⁵⁵ Նանայայի և Նանայի վերաբերյալ տե՛ս L e i c k. A Dictionary of Ancient Near Eastern Mythology. London, New York. 1991, p. 124-125. Мифы народов мира. Т. II, М., 1982, с. 197.

⁵⁶ И. М. Дьяконов. Преыстория..., с. 16, прим.13.

⁵⁷ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. Հ. II. Երևան, 1973, էջ 182-183:

9. Աստղիկի հիմնական կենտրոնը դրսևում էր Քարքե լեռան լանջին, ուր նա պաշտվում էր Վահագնի և Անահիտի հետ մեկտեղ, մեկ տաճարային համալիրում (Ագաթանգեղոս § 809): Նույնացվել է Ափրոզիտեի հետ: Աստղիկը, ինչպես Անահիտը և Նանեն, կարող է գիտվել որպես մեծ մայր դիցուհու մի ասպեկտի մարմնավորումը, կամ նրա անուններից մեկը: Հայոց դիցարանի աստվածների մեջ Աստղիկը միակն է, որի անունը ծագումով բնիկ հայկական է աստղ-ի քնքշականը (հնդեվրոպական *Haster/l-): Գ.Հոֆմանը XIX դ. կարծիք է հայտնել, որ Աստղիկը բառացի թարգմանությունն է սիրիական *Kaukabta*-ի (*Kavkabta*/*Kaukabta* նշանակում է «Աստղուհի»), որը լայնորեն հղվում է⁵⁸: Աստղիկն, իրոք, անբաժանելի է սիրիական, բայց և միջագետքյան ու խուռաանաստղիական դիցուհիներից: Նրանցից առաջինը շումերական *Inanna*-ն էր, աքադեերեն՝ *Istar*: Իշտարը բարդ կերպար է, որն իրենում ներառել է նաև խուռիական Շավուշկա դիցուհու բնութագրերը: Նա և՛ անունով, և՛ գործառույթով համապատասխանում է Հայոց Աստղիկին՝ երկուսն էլ սիրո ու մայրությունից դիցուհիներ են, Վեներա մոլորակի անձնավորումները: Հատկանշական է Իշտարի և Աստղիկի տաճարների առնչությունը հայտնի մի բնորոշ ընդհանրություն: Մինչև ուշ ասուրական ժամանակները Նինվեի Իշտարի տաճարի մի հատվածը հայտնի էր որպես *bit nathi*, «ննջասենյակ» (բառացի՝ «ճոխ մահճակալի տուն»): Հմմտ. խուռ. *nathi* «ճոխ մահճակալ», որը հիշվում է դարեր առաջ խուռաանաստղիական դիցուհիների՝ Խեբատի, Իշխարայի և Շավուշկայի առնչությունը⁵⁹: Իսկ Աստղիկի մեհյանը կոչվում էր «սենեակ Վահագնի» (Ագաթանգեղոս § 809):

Իշտարի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ. 1. Իշտարի նախատիպը, սեմ. **attar*, հավանաբար, նշանակել է Վեներա մոլորակն իր երկու ասպեկտներով՝ առավոտյան (արական) և երեկոյան (իգական)⁶⁰, 2. այդ արմատն արևելյան սեմականում նշանակել է «աստվածուհի» (ընդհանրապես), արևմտյանում՝ մի կոնկրետ աստվածուհու, իսկ հարավայինում՝ կոնկրետ աստծու անուն⁶¹, 3. սեմական **attar* և հնդեվրոպական **Haster*-«աստղը» անբաժանելի են իրարից. հաճախ հնդեվրոպական արմատն է փոխառված համարվել, բայց, թերևս, սեմական ձևերն են փոխառված հնդեվրոպականից, քանի որ հավանական է «աստղ» նշանակությունից «աստվածուհուց աստղ» փոխառություն ուղղությունը, և ոչ հակառակը⁶²:

⁵⁸ Գ. Կ. Լ. Գ. Ե. Նշվ. աշխ., էջ 77-78. Մ. Ա. Բ. Գ. Ե. Երկեր. Հ. Ը, էջ 244-245: Г. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. I, с. 310. Հ. Ա. Երևան, 1942, էջ 232. *Et. II*, p. 441:

⁵⁹ G. B e c k m a n. Star of Nineveh Reconsidered.— "Journal of Cuneiform Studies", vol. 50. 1998. p. 8: E. L a r o c h e. Glossaire de la langue hourite. Revue hittite et assyrienne. T. XXXIV-XXXV. Paris. 1976-77, p. 179-180.

⁶⁰ G. L e i c k. Նշվ. աշխ., էջ 96.

⁶¹ Мифы народов мира. Т. I, с. 595; И. М. Д ъ я к о н о в. О прародине носителей индоевропейских диалектов. I.— "Вестник древней истории", 1982, № 3, с. 20-21.

⁶² Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 875, ծանոթ. 1, 967, Ի. Դյակոնովի քննադատության մերժումով, Հմմտ. J. P. M a l l o r y, D. Q. A d a m s. Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago 1997, p. 87, 543.

Հնդեվրոպական *Haster-ը հանգեցվում է *Has- (*h₂eh₂-s-) «այր(վ)ել» արմատին, *ter- ածանցով: Իշտարի ազգակիցները, ինչպես ասվեց, սեմական ավանդույթներում հանգես են դալիս և որպես կին (արևմտասեմ. Աստարտե), և որպես տղամարդ աստվածներ (արևմտասեմ. Աստար/ու, եմենյան Ասաար): Բնութագրական է, որ նույն երկվույթյունն է հայտ է գալիս նաև հայոց մեջ «Սասնա ծռերի» մի սլաոուումում Աստղիկ թագավորը Սասնասարի ու Բաղգասարի սլասն է, իսկ մի շարք սլասուումներում Աստղիկը (սլարոն Աստղիկ, Աստղիկ Ցոլածին, Աստղիկ Երզնկացի, Աստղի Երկրանցի) Դավթի կամ Մհերի ազգականն է ու հակառակորդը, որը զոհվում է նրանց հետ մենամարտում: Այս Աստղիկը որոշ չափով համադրելի է ուղարթյան Աստարի հետ (մ.թ.ա. XIV-XIII դդ.): Վերջինս Բալուեի հակառակորդն էր, իսկ ամսրոսյի և կայծակի աստված Բալուն համադրելի է կայծակե թրի տեր Դավթի հետ: Աստարի մակդիրն էր ԻՇ «գոռոզ», «սարսափելի»⁶³: Սա հիշեցնում է Աստղիկի Երզնկացի կոչումը (բայց, հաշվի առնելով Աստղիկի և Անահիտի կերպարների որոշ նույնականությունը, «երզնկացին» կարող է ընկալվել որպես Երզնկայի Անահիտի մի կոչումը): Մյուս կողմից, Աստղիկ դիցուհու լեգենդը տեղայնացվում է Գրգուռ լեռան շրջանում⁶⁴, որի մյուս անունն էր Գոռոզ⁶⁵: Այսպիսով, Աստղիկը սեմական կապերը գալիս են ավելի հին ժամանակներից: Պարոն Աստղիկը մենամարտելիս կրակ է թափում երկնքից իր հակառակորդի վրա⁶⁶: Աստղիկի կապը կրակի և այրվելու հետ ակնհայտ է այն բացահայտվում է հնդեվրոպական վերակազմույթյան արդյունքում միայն: Պարոն Աստղիկը չի կարող հանգեցվել սիրիական Kaukabta-ին, իսկ նրա կրակ թափող կերպարը բխում է անվան հնդեվրոպական ստուգաբանությունից և, ուրեմն, վաղնջական է⁶⁷: Աստղիկ դիցանվան բնիկ ծագումն է ակնարկում նաև այդ անունով տեղանունների տարածվածությունը⁶⁸ (մյուս նախաքրիստոնեսական դիցանուններով կազմված տեղանունները հաղվադեպ են):

10. Հայոց Արամաղդը, Միհրը և Վահագնը շատ հատկանիշներով պիտի համասլատասխանեն Կոմմագենեի մեծ աստվածներին՝ Օրոմասդեսին, Միթրասին և Արտագենեսին (Օρομάσδης, Μίθρας, Ἀρταγνης), որոնց հսկայական արձանները Անտիոքոս Կոմմագենացի արքան (մ.թ.ա. I դ.) կունգնեցրել էր Նեմրուդ լեռան վրա: Արձանների վերաբերյալ արձանագ-

⁶³ Այս մակդիրի վերաբերյալ տե՛ս J. G r a y. The Desert God 'Attr in the Literature and Religion of Canaan. - "Journal of Near Eastern Studies", vol. 8, 1949, p. 74; И. Ш. Ш и ф м а н. Культура древнего Угарита. М., 1987, с. 65.

⁶⁴ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդատում. Երևան, 1969, էջ 153:

⁶⁵ Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Մ. Մ ե լ ի ք - Բ ա լ ո շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1986, էջ 948, 961:

⁶⁶ Այս կերպարի մասին տե՛ս Ա. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Ծանոթագրություններ. Սասնա ծռեր. հ. 7, Երևան, 1999, էջ 398:

⁶⁷ Աստղիկ դիցուհու բնիկ հայկական ակունքների վերաբերյալ տե՛ս և Ա. Մ ա - տ ի կ յ ա ն. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 99-100, Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս. Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան, 2001, էջ 168-169: А. Е. П е т р о с я н. Армянский эпос и мифология, с. 66-67.

⁶⁸ Այդ տեղանունների վերաբերյալ տե՛ս Գ. Ս ը վ ա ն ձ տ յ ա ն. Երկեր. հ. I, էջ 47-48, Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Մ. Մ ե լ ի ք - Բ ա լ ո շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., հ. 1, էջ 344-346:

րության մեջ հիշվում է և «ամենքին սնուցող հայրենիք Կոմագենեն», ուր երկիրը հանդես է դալիս Անահիտա գիցուհու փոխարեն⁶⁹: Կոմագենեի հին ուրարտական անունը՝ *Qumaha* (ասորեստանյան աղբյուրներում՝ *Kumuhli-* և նման ձևերով), անվանաբանորեն նույնական է Արամաղղի կենտրոնի Կոմամախա-Կամախի հետ, որով այդ ողջ երկիրը ներկայանում է որպես ամսրոպային աստծու մի սրբավայր: Այսինքն՝ Օրոմասդեսը, ինչպես և Արամաղղը, Թեղուբի ժառանգն էր: Կոմագենեն ժամանակին Մոփքի հայկական թագավորության կազմում է եղել, և կոմագենյան ու հայկական գլխաստիաները նույն ծագումն ունեին⁷⁰: Կարելի է կարծել, որ մ.թ.ա. I դ. հայոց աստվածները նույնական են եղել Կոմագենեի այս աստվածներին: Բայց և այնպես, Արամաղղ ձևը նույնական չէ Օրոմասդեսին, որին ավելի մոտ է պահլավ. *Ohrmazd*-ը, Միթրասն ու Արտագենոն էլ նման են առավել վաղ իրանական *Mithra*-ին ու **Varθragna*-ին: Ընդ որում, ի հակադրություն հայոց Միհր-Հեփեստոսի, կոմագենյան Միթրասը նույնացված է արև-Հելիոսին, Աստվոնին և Հերմեսին: Կոմագենեի իրանական դիցանուններն, այսպիսով, ավելի արխաիկ են, այնտեղ ի հայտ եկող իրանական ազդեցությունը գալիս է առավել հին շրջանից, իսկ աստվածների կերպարներն առավել մոտ են իրանականին:

11. Ուրարտուի՝ Հայկական լեռնաշխարհն առաջինը մեկ միասնական պետության մեջ միավորած պետական դիցարանը հայտնի է հիմնականում Վանա ժայռի «Մհերի դռան» արձանագրությունից (մ.թ.ա. IX դ. վերջ), ուր, հիշվում են շուրջ հիսուն դիցանուն (արական և իգական) և բաղում այլ սրբություններ, կանոնակարգված մի քանի մակարդակում, ըստ մասուցվող դոհերի քանակի: Դիցարանի էական առանձնահատկություններից է գերագույն աստված Խալդիի պաշտամունքի բացառիկ շեշտվածությունը և մեծ աստվածների եռյակի՝ Խալդիի, ամսրոպի աստված Թեյշերայի և սրբի աստված Շիվինի միասնական հիշատակությունը ասորերը բանաձևերում: Այս աստվածները պաշտվում էին իրենց կանանց հետ միասին, համապատասխանաբար, Արդինի-Մուծածիրում, Կուսինոում (երկուսն էլ Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում) և Վանում⁷¹:

Ինչպես տեսանք, Մհերը ծագում է Խալդիից, իսկ բանահայտական Գրողը՝ Խուտուլինից: Սանասարը՝ թուր-կեծակիի տաղին տերն ու Սասունի կառուցողը, պետք է որ ծագի սերարական դարաշրջանում Սասունը և մերձակա տարածքներն ընդգրկող երկրի՝ Շուբրիայի ամսրոպի աստված Թեյշերից⁷²: Վան քաղաքը հայոց մեջ կոչվել է Շամիրամի քաղաք, Շամիրամակերտ, իսկ Ուրարտուում այն, Տուշպա անունով, պաշտամունքի կենտրոնն էր Տուշպուեա գիցուհու, արևի աստծու կնոջ, որը ցույց է տա-

⁶⁹ J. P u h v e I. Comparative Mythology. Baltimore, London, 1987. p. 104.

⁷⁰ Կոմագենեի վերաբերյալ տե՛ս Գ. Ա. Т и р а ц я н. Страна Коммагена и Армения. — "Известия" АН АрмССР (общественные науки). 1956, № 3. Գ. Կ ի - ր ա ջ յ ա ն. Հայաստանը մ.թ.ա. III դարում. — Հայ ժողովրդի պատմություն. հ. I, Երևան, 1971, էջ 510-514:

⁷¹ Ուրարտուի դիցարանի վերաբերյալ տե՛ս Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ.:

⁷² Սանասարի որպես ամսրոպի աստծու փոխական ասրեբրակի վերաբերյալ տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 414-418, հ. Է, էջ 72-73: Թեյշերի և Սանասարի նույնացման վերաբերյալ տե՛ս Ա. Ե. П е т р о с я н. նշվ. աշխ., էջ 24-25:

լիս Տուշպուեա-Շամիրամ ժողովուրդները: Վիսպական Շամիրամի երկու սրամական նախապիտանիք մեկը Ասորեստանի Սինաքերիբ (= Սենեքերիմ) արքայի կին Նակիլան է⁷³, որն ուղղակի համապատասխանում է էպոսի Ծովինարին՝ Սենեքերիմի կնոջը: Այսպիսով, Ուրարտուի դարաշրջանի մեծ աստվածների կերպարները պահպանվել են Հայաստանի հարավի վիսպական ավանդույթի մեջ:

Մեծ Հայքի դիցարանը նշանակալի նմանություններ և տարբերություններ է դրսևորում ուրարականի հետ: Խալդիի ժառանգ Մհերը, հայկական համասեռություն, ծագում է Միհրից, որն ակնարկում է Խալդի-Միհր համապատասխանությունը: Արամազդը, իր «ամպրոպային» բնորոշմամբ և սրբավայրի անունով (Անի-Կամախ < Կոմմախա), համապատասխանում է Կոմմենուի աստված Թեյշեբային: Վահագնը, որը նույնացվել է որպես արեգակ, համադրելի է Շիվինին, իսկ Տիրը, որպես «գալի» և «գրիչ»՝ Խոտուխինին: Անահիտը հիշվում է որպես Արամազդի կին, Աստղիկը՝ Վահագնի սիրուհին է, իսկ «Սանա ծուերում» պառավ Նանեն հիշվում է որպես Մհերի նախկին սիրուհի: Սա հնարավորություն է սալիս հայկական դիցարանի երեք մեծ աստվածուհիներին նույնացնել որպես երեք մեծ աստվածների զուգակիցներ, որը նույնպես բնորոշ է ուրարտական դիցարանի կառույցին⁷⁴: Բայց Միհրը չի կարող հավակնել դերադուլն ասածու դերին: Հայոց մեծ աստվածների հիերարխիկ շարքը կարող է պատկերացվել որպես Արամազդ, Վահագն և Միհր, այսինքն ուրարտականի համեմատ նկատելի է դերերի տեղաշարժ: Հնարավոր է որոշ ուրարտական դիցանունների հայկական ծագումը⁷⁵, բայց հայոց դիցարանի դիցանունները դալիս են հետադարձական ժամանակներից և չունեն ուրարտական ժամանակների համապատասխանություններ: Բայց այդ, որը շատ կարևոր է, չեն համապատասխանում պաշտամունքի վայրերը, և հայոց մեծ աստվածները, փաստորեն, չեն կարող ուղղակի նույնացվել ուրարտականների:

Հայ և ուրարտական դիցարանների էական ընդհանրությունն, այսպիսով, կառուցվածքային և գործառնություն է՝ երեք մեծ աստվածների շարքեր (Թերևս, իրենց իգական զուգակիցներով), որոնք, թեև այլ հերթականություններ և այլ անդամացումներով, որոշակիորեն համապատասխանում են իրար: Արանց հաջորդում են իրար համադրելի «գրող» աստվածները (Խոտուխինի, Տիր):

12. Հայաստանի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրությունից մեջ, որը թերևս խեթական և հայաստական արքաների համաձայնաբերի մի հատված է (KUB XXVI, 39, IV, 26): Հիշվում են տասնչորս «քաղաքների» աստվածներ, որոնց մի մասը կրկնվում է (հատկապես փաղափարաբերով ներկայացված ամպրոպի աստվածը՝ ^DU): Առաջին տեղում են Հայաստ «քաղաքի» (= երկրի) U.GUR աստվածը և INANNA աստվածու-

⁷³ H. L e w y. Nitokris-Naqi'a. — "Journal of Near Eastern Studies", vol. 11, 1952.

⁷⁴ Հայկական և ուրարտական դիցարանական կերպարների համապատասխանությունների վերաբերյալ տես Ա. Պ ե ս ո ս յ ա ն. Հայկական էպոսի հնագույն ակունքները. Երևան, 1997, էջ 40-47.

⁷⁵ Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայկական շերտը ուրարտական դիցարանում. — ՊԲՀ, 1986, № 1:

հին, որոնք գրավում են առաջին տողը և պարզորոշ առանձնացված են մյուս աստվածներից հաջորդ տողը գատարկ է թողնված⁷⁶:

Սա մեծ աստվածների մի զույգ է աստվածների նահապետն ու նրա կիները: Անունները ներկայացված են գաղափարագրով, այսինքն՝ տեղական աստվածները համապատասխանեցվել են միջագետքյան U.GUR-ին և INANNA-ին: INANNA-ն մայր աստվածուհու շումերոգրամն է (= աքադ. Իշտար): U.GUR-ը, հավանաբար, սկզբնապես եղել է Ներգալի թրի անվանումը՝ աքադ. *Ugur* «կործանի՛ր» իմաստով, որն աստվածացվել է որպես Ներգալի «վեգիրը»⁷⁷: Արդեն հինբաբելական դարաշրջանից (մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից) նա նույնացվել է Ներգալին և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Ներգալը հնագույն Հյուսիսմիջագետքյան աստված էր, կապված մահվան և սպտերազմի հետ, անդրաշխարհի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև Հարավ և արևմուտք⁷⁸: Խեթական և լուվական աղբյուրներում U.GUR-ը հիշվում է շատ հաճախ: Հիշատակվում են, մեկական անգամ, Խալպուտիլին քաղաքի U.GUR-ը և նրա պաշտամունքը Ջիլիլայում, ալա և բազմիցս Հայաստանի U.GUR-ը (KBo IV 13 ii 21, iii 7, iv [3], 24, vi 33+; KUB X 82.5; XIX 128 ii 10, vi 19; KUB XXVI 39 iv 26; IboT III 15 I 6-7)⁷⁹: Սա ցույց է տալիս, որ խեթական կայսրության և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներից հենց Հայաստան է եղել U.GUR-ի պաշտամունքի նշանակալի կենտրոնը: Խեթախեթական ավանդույթում, երկրորդ հազարամյակի կեսից, միջագետքյան Ներգալ / U.GUR-ը նույնացվել է խեթական Sulinkatte «Սուլի արքա», կամ Sulinkatte՝ «Սուլիի արքա» աստծուն⁸⁰, որի «արքա» լինելը նորից շեշտում է U.GUR-ի տիրող դիրքը դիցարանում: Ակնհայտ է, որ U.GUR-ը և INANNA-ն հայկական նախաքրիստոնեական գիցարանի կառույցում սլիտի համապատասխանեին աստվածների նահապետ Արամագդին և մայր աստվածուհի Անահիտին:

Ներգալի զենքերից էր թուր / դաշույնը՝ (patru / namsaru), U.GUR-ի առարկայական սիմվոլը⁸¹: Թուր-U.GUR-Sulinkatte նույնացումը հնարավորություն է տալիս Suli(n)katte գիցանունը մեկնարանել որպես «թուր-տր-

⁷⁶ Արձանագրության հրատարակությունները տե՛ս օրինակ E. F o r t e r. *Hajasa-Azzi. — "Caucasica"*, 1931, Fasc. 9, S. 6. Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 46-47, Г. А. К а п а н - ц я н. Историко-лингвистические работы. Т. 1, с. 88; В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 148. V. H a a s. Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands. Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr. (Xenia 17). Konstanz, 1986, S. 24. Արձանագրությունը վնասված է, և Ձ. Հազըր առանց ընթերցման է թողնում առաջին աստուհու անունը, բայց այն, որ Հայաստանի գլխավոր աստվածը U.GUR-ն էր, դժվար է կասկածել (տե՛ս ստորև):

⁷⁷ W. G. L a m b e r t. Studies in Nergal. Review of E. Weiher. Der Babylonische Gott Nergal—. "Bibliotheca Orientalis", 30, 1973, p. 356; Reallexikon der Assyriologie und vorderasiatischen Archäologie (այսուհետև՝ RLA). Bd. 9. 3/4. Berlin, New York, 1999, S. 216, 220.

⁷⁸ Ներգալի վերաբերյալ տե՛ս RLA 9, S. 215-226:

⁷⁹ B. V a n G e s s e l l. Onomasticon of the Hittite pantheon. Leiden, New York, Köln, 1998, p. 839.

⁸⁰ V. H a a s. Geschichte der hethitischen Religion, S. 367, 599.

⁸¹ E. L a r o c h e. Recherches sur les noms des dieux hittites. Paris, 1947, p. 105; V. H a a s. Op. cit., 367; RLA 9, S. 224.

քա» կամ «թրի արքա»: Sulī-ն (Հավանաբար սուլի, քանի որ խեթերեն սե-սլադիր S-ն արագոցում է S Հնչյունը) Համադրելի է Հնդեվրոպական *k^hu-, *k^ho- «սուր» արմատին, որից l- և r- ածական/ածանցներով «սուր պենք» նշանակումով տերմիններ են ստեղծվել (Հմմտ. Հայ. սուր «թուր, որևէ սուր գործիք», սլաք < սուլ-աք (-աք ածանցով) «նետ, նիզակ», Հնդ. सुलु «նիզակ» և այլն, այսինքն, այս դիցանվան առաջին մասը Հնդեվրոպական է: Վերին աստիճանի հատկանշական է, որ ուրարտական գերագույն աստված Խալդեի սիմվոլն էր ծիսական մեծ նիզակը, որ կոչվում էր suri: Այն, ակնհայտորեն, նույնական է Հայ. սուր բառին⁸²:

Sulikatte-ն Համարվում էր Հայրը խաթական ամսրոսլի աստված Taru-ի, որը խեթերենում Հանդես է դալիս Tarawa- ձևով: Այս անունը Համադրելի է ամսրոսլի աստծու Հնդեվրոպական անուններից մեկին՝ *terH- արմատից (Հմմտ. անատոլիական Tarhuni-): Ըստ այդմ, խաթական այս դիցանունն էլ Հավանաբար Հնդեվրոպական ծագում ունի⁸³: Ուշ խեթական դարաշրջանում Տարուն սլիտի նույնացվեց Թեշուբի որդու Հետ⁸⁴:

Հայաստանի երրորդ աստծու անունը, որից սլազականվել է վերջին մասը, ըստ մի կարծիքի, կարող է լինել Izzistanus⁸⁵, այսինքն խաթական արևի աստված Estan-ի խեթական մի ձևը (Հնարավոր է՝ Ezzi Estan-ից՝ «բարի սրևի աստված»)՝⁸⁶: Եթե դա այդպես է, ապա Հայոց Արամագը, Անահիտ և Վահագն եռյակի առաջին նախատիպը Հայաստան է, որը հետագայում է միայն վերանվանվել իրանական անուններով:

Հայաստանի դիցարանի վեցերորդ աստված Tarumu-ն (Ta-a-ru-u-mu-us) անրաժանելի է թվում Taru-Tarawa-ից⁸⁷: Այլևայլ փաստեր ցույց են տալիս,

⁸² Այս տերմինի իմաստը վերջնականապես բացահայտվեց վերջերս. Այանիսից դուրսված Հսկայական մոտ 80 սանտիմետրանոց նիզակաձայրի վրայի արձանագրության մեջ այն անվանված է suri, տե՛ս A. Ç i l i n g i r o ğ l u, M. S a l v i n i. When was the Castle of Ayanis Built and What is the Meaning of the Word Suri?— "Anatolian Studies", 49, 1999, p. 56. 59.

⁸³ С. Л. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. К названию бога громовержца в индоевропейских языках. — "Балто-славянские исследования. 1985", М., 1987, с. 150-151, прим. 3.

⁸⁴ О. Г е р н и. Хетты. М., 1987, с. 126.

⁸⁵ В. Н. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 148:

⁸⁶ Այս դիցանվան վերաբերյալ եղած կարծիքները տե՛ս J. P u h v e l. Hittite Etymological Dictionary. V. 1, p. 468.

⁸⁷ Г. Б. Д ж а у к я н. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, с. 51 և հեղինակի մյուս աշխատություններում (ըստ հեղինակի՝ Taru-muwa > Tarumu- «Տարուի ուժ»): Հնդհանրապես, Հնդեվրոպական դիցանունները Հաճախ կաղծվում են «աճականական» *-no- ածանցով (Հմմտ. Հնդ. Vaguna, ուու. Перунъ, իսլանդ. Óðinn, լատ. Quirinus և այլն): Բայց սլովակյան ավանդույթում Pagon անունը Հանդես է դալիս որպես ամսրոսլի աստծու անվան մի աղավաղված ձև, որը բացատրվում է տարուս-վորմամբ, hrom «որոտ» բառի հետ բաղարկմամբ, Perun կամ *Iarop ձևերից. տե՛ս օրինակ В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования в области славянских древностей. М., 1974, с. 17, 104-105. С. Л. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. Նշվ. աշխ., էջ 151-152: Հայկական հնագույն դիցաբանական անվանացանկին էլ բնորոշ են ամ-ով վերջավորությունները (Հմմտ. Արամ, Գեղամ, Բարշամ, Շամիրամ, որոնցից վերջին երկուսը առաջինների նմանեցված՝ ձևափոխված ստարալեզու ձևեր են (Ba'al Samin-ից ու Sammuramat-ից): Հայաստանի Tarumu-ն էլ Հնարավոր է սլասկերացնել որպես նման մի ձևափոխության արդյունք. կարելի է հիշել նաև, որ տարածաշրջանի սեպագիր անուններում հրբեմն առկա է w/m հերթագայությունը:

որ Վահագն աստծու կենտրոնի Տարաւն (Tarawn) անվանումը պետք է կապվի խաթա-խեթական Tarw Tarawa-ի հետ: Ըստ Խորենացու (Բ.ը), Տարոնի հին տերերի էպոնիմ-նահապետն էր Սլաքը, սերված Հայկից, կամ Հայկից էլ առաջ Հայաստանում ապրողներից: Սլաք-Տարաւն նահապետեղանուն կապը միանգամայն համադրելի է Sulikatte-Tarawa ծննդաբանությանը և, կարելի է կարծել, որ այստեղ մենք գործ ունենք տեղի Հնագույն առասպելաբանական մի հանգուլցի հետ, որը հետագայում վերափոխվել է նախարարական տան ծննդաբանության: Սլաքն, ինչպես տեսանք, ստուգաբանորեն նույնական է Sulikatte-ի առաջին մասին. հնարավոր է նույնիսկ, որ այն ուղղակի ծագում է Sulikatte-ից (*Sulok'at'e > *Sulak'ay > Sulak' < Slak')⁸⁸.

Հայաստական ութերորդ աստվածն էր Terittitunni-ն (Te-ri-it-ti-tu-u-ni-is), որի անունը Գ. Ղափանցյանը և Գ. Զահուկյանը ստուգաբանում են հնդեվրոպական *trei- «երեք» արմատից, իսկ Վ.Տոպորովն, ինչպես ասվեց, հնարավոր է համարում նրա՝ Վահագնի նախորդը լինելը⁸⁹: Հատկանշական է, որ Վահագնի տաճարը ևս հիշվում է որպես «ութերորդ» (Ագաթանգեղոս § 809), այսինքն՝ այստեղ ևս մենք գործ ունենք, թերևս, հայ և հայաստական դիցարանների մի կառուցվածքային ընդհանրություն հետ:

Բացառված չէ, որ հայաստական դիցարանի տասնմեկերորդ աստված Baltaik-ը (Ba-al-ta-ik) համապատասխանում է արևմտասեմական Ba'alat դիցուհուն, որը նշանակում է ուղղակի «տիրուհի» և մարմնավորված մի մակդիր է (Ba'al / Ba'lu-ի իգական ձևն է), Աստարտեի մի անունը⁹⁰: Այդ դեպքում, այն պետք է ներկայացնի խառը կազմություն, հնդեվրոպական ծագման քնքշական-նվազական ik ածանցով: Հատկանշական է, որ նման մի ձև է հենց Ba'alat-ի հետ համադրելի Աստղիկը:

Հայաստյի առասպելների վերաբերյալ ուղղակի տվյալներ չկան: Ի՛նչպիսիք ուշ խեթական ժամանակների (մ.թ.ա XIV-XIII դդ.) մի աղբյուրում հիշվում է մի արևմտասեմական՝ քանանական առասպել, տեղայնացած այս շրջանում: Ըստ այդ առասպելի, Ասերտու (Asertu) աստվածուհին, գերագույն աստված էլ-կունիրսայի (El-kunirsa) կինը, սիրո առաջարկություն է անում էլ-կունիրսայի որդի ամսլրոպի աստծուն (արևմտասեմական համատեքստում՝ Ba'al, ուգարիթյան Ba'lu): Ամսլրոպի աստվածը «գնաց դեպի Mala գետի ակունքները: Նա գնաց էլ-կունիրսայի՝ Ասերտուի ամուսնու մոտ,

⁸⁸ Այս հարցերի շուրջը տե՛ս А. Е. Петросян. Նշվ. աշխ., էջ 34–35, 156–157, 164. Տարաւնը և նրա աստված Վահագնը համադրվել են անատոլիական ամսլրոպի աստծու անունների հետ Մ.Հարությունյանի կողմից, տես Ս. Հ ա ղ ո լ թ յ ո լ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ 101–111: Sulikatte-Սլաք համադրություն հեղինակը Ջ. Ռասելն է, որը գտնում է, որ Սլաքը կարող էր ներկայացնել Sulikatte-ի իրիստ սղված ձևը՝ J. R u s s e l l. Ancient Anatolians and Armenians.— “The Second International Symposium on Armenian Linguistics, Proceedings”. Yerevan, 1993, p. 75.

⁸⁹ Г. А. Капанця н. Историко-лингвистические работы. Т. I, с. 93-94, 306; Г. Б. Д ж а у к я н. Хайасский язык..., с. 51-52; В. Н. Т о п о р о в. Նշվ. աշխ., էջ 105:

⁹⁰ Բալտարիկի սեմական՝ աքադական մեկնաբանությունը տե՛ս Г. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. I, с. 94. Հմտ. Г. Б. Д ж а у к я н. Хайасский язык..., с. 47-49. Բա՛ալատ (Բալտի)-Աստարտեի առասպելը՝ И. Ш. Ш и ф м а н. Նշվ. աշխ., էջ 157–158:

[և] մտալ վրանը (= տուն, կացարան) էլ-կունիրսայի»⁹¹: էլ-կունիրսա անունը խեթական հաղորդումն է սեմական էլ աստծու և նրա մակդիրի օel qūnī (ʾa)rsa «երկրի արարիչ էլ»: Քանանական-փյունիկյան էլը, ուգարիթյան Լիուն, արևմտասեմական գերագույն աստվածն էր, որն այս կոչումով ի հայտ է դալիս նաև այլ քանանա-ամորեական և պալմիրական (արամեերեն) տեքստերում: Այս աստվածն է, որ Աստվածաշնչի (Մննգ. ժգ. 19) երաշխական բնադրում կոչվում է «էլ ամենաբարձրյալ, երկնքի և երկրի արարիչ» և նույնացվում Յահվեի հետ⁹²: Մալան Եփրատի խեթական անվանումն է: Մ.թ.ա. XIV-XIII դդ. Եփրատի ակունքների երկիրը Հայաստան էր, և ակնհայտ է, որ Եփրատի ակունքներում բնակվող «երկրի արարիչ էլը» սկսք է նույնացվել Հայաստայի մեծ աստծուն: Այսինքն՝ Հայաստայի մեծ աստվածը նույնացվել է այն աստծուն, որը հետագա համաշխարհային կրոններում հանդես է գալիս որպես միակ արարիչ աստված: Ասերտուն (= Աստարտե)⁹³, ապա և տեքստի հաջորդ մասում հիշվող Իշտարը⁹⁴ համադրելի են U.GUR-ի կնոջը և Հայաստայի այլ դիցունհիներին, իսկ Բա՛ալը ամպրոպի աստվածներից մեկին կամ տարբեր աղերում պաշտվող միակ ամպրոպի աստծուն:

Այսպիսով, հայաստական և հայկական դիցարաններին բնորոշ են որոշ ակնհայտ ընդհանրություններ (աշխարհսփյուրդական, կառուցվածքային և կերպարային): 1. Հայկական աստվածների սլաշտամունքները սեղանացված են հին Հայաստայի տարածքներում, 2. Հայաստական դիցարանի սլաշտամունքները քանակը համագրելի է Հայոց աստվածների թվի հետ, 3. երկու դիցարաններն էլ գլխավորում են աստվածների նահապետը և իր կինը, 4. գերագույն աստվածը երկնքի և երկրի արարիչն է, ապա և անդրաշխարհի տիրակալը, 5. «ութերորդ» աստվածները համապատասխանում են նաև այլ առումներով, 6. Տարոնի աստվածները նույնպես, թերևս, առնչվել են հայաստական սլաշտամունքներին, 7. ի հայտ են գալիս արևմտասեմական կապեր:

13. Կրոնական փոփոխությունների ժամանակ հին աստվածների կերպարները հաճախ անցնում են առավել ցածր՝ վիպական հերոսների մակարդակ: Այս երևույթի տիպիկ օրինակներ են Մհերի, Սանասարի և Շամիրամի ծագումը սեղի հին աստվածներից: Հայոց հին աստվածները պահպանվել էին հատկապես հնագույն վեպի աղգածին ավանդույթյան կերպարներում: Արդեն վաղուց մանրամասն հիմնավորվել է վերջին աղգածին հերոսի՝ Արա Գեղեցիկի և նրա հակառակորդ Շամիրամի ծագումը մեռնող

⁹¹ Այս տեքստի սրահպանված հաստատվածի հրատարակությունը տե՛ս Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament. Princeton, 1969, p. 519; E. L i p i n s k i. Mythological Traditions Related to Mount Hermon and to the Mountains of Armenia. — "Orientalia Lovaniensia Periodica", 2, 1971, p. 56-57; В. В. И в а н о в. Луна, упавшая с неба: Древняя литература Малой Азии. М., 1977, с. 167. H o f f n e r. Նշվ. աշխ., էջ 69:

⁹² И. Ш. Ш и ф м а н. Նշվ. աշխ., էջ 146:

⁹³ Նույն տեղում, էջ 153:

⁹⁴ H. H o f f n e r. Նշվ. աշխ., էջ 70:

և հարուժյունն առնող աստծու և մեծ մայր դիցուհու կերպարներից⁹⁶: Արա Գեղեցիկի հայրը՝ Արամը ամպրոպի աստծու ժառանգն է, Թեղուբ-Թեյլեբայի հայկական համապատասխանությունը⁹⁷, իսկ Արամի հակառակորդ Բարչամը ծագում է Բարչամիներից:

Հին Միջագետքում մոլորակները կոչվել են աստվածների անուններով: Այդ մոտեցումը, բարելոնյան աստղագիտության հետ, անցել էր նաև այլ հին ժողովուրդների՝ հույներին, հռոմեացիներին, պարսիկներին⁹⁸: Մարս մոլորակը Միջագետքում կոչվել է մահվան և պատերազմի աստված Ներգալի անունով (հուն. Արես, լատ. Մարս, իրան. Վարահրան): Հայոց մեջ այն կապվել է Հայկի հետ⁹⁹: Սա խոսում է Հայկ-Ներգալ կերպարային կապի մասին՝ Հայոց առաջին նահապետ և նախնի Հայկը՝ Բելին հաղթողը, ակնհայտորեն, առնչվում է մեռած նախնիների և պատերազմի հետ: Ուշագրավ է Հայկի և Ներգալի ևս մեկ ընդհանուր բնութագիրը՝ Ներգալի սիմվոլիկ գեներելից էին լայն աղեղն ու նետը⁹⁹, իսկ Հայկը նետաձիգ է, որն իր հակառակորդ Բելին սպանում է իր «լայնալիճ» աղեղից արձակված նետով (Խորենացի Ա.ժա): Ըստ այդմ, Հայկը համադրելի է «Հայասա քաղաքի» մեծ աստծուն՝ U.GUR-Ներգալին: Հայկ և Հայասա անունների համահնչությունն էլ հնարավոր է դարձնում այդ անունների ստուգաբանական կապի և Հայկի՝ Հայասայի էպոնիմ աստված լինելու ենթադրությունը (Հայկ < Հայ-իկ, հին դիցանունների բնորոշ քնքշական իկ ածանցով, հմմտ. Աստղիկ, ապա և Հայկի որդու նմանատիպ անունը՝ Արամանեակ):

Ուշանատուրիական դարաշրջանում արևմտասեմական էլ-կուներսան նույնացվել է միջագետքյան էա աստծուն (մի մ.թ.ա. VIII դ. մի երկվեզու արձանագրության մեջ նա հիբրոգլիֆային լուսվերենում ներկայացված է որպես 2-2-S, այսինքն՝ էա)¹⁰⁰: Վերջինս պատկերվել է իր ուսերից դուրս եկող Տիգրիս և Եփրատ գետերով, այսինքն՝ կարող է տեղայնացվել այդ գետերի ակունքներում (Հայաստանում) և հայագիտության մեջ, անվան նմանություն ու այդ տեղայնացման պատճառով, համեմատվում է Հայկի հետ¹⁰¹: Արժե հիշել նաև էայի երկու մակերի՝ ban kullati «ամեն ինչի

⁹⁶ Ա. Մ ա տ ի կ յ ա ն. Նշվ. աշխ., Ն. Ա դ ո ն ց. Հին Հայոց աշխարհահայացքը. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Արա Գեղեցիկի պաշտամունքը. Երևան, 1944:

⁹⁷ Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և Հայոց ազգածագման խնդիրը. Երևան, 1997: А. Е. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 47-57:

⁹⁸ Б. В а н - д е р - В е р д е н. Пробуждающаяся наука. II. Рождение астрономии. М., 1991, с. 195.

⁹⁹ Ղ. Ա լ լ ի շ ա ն. Նշվ. աշխ., էջ 124:

⁹⁹ RLA 9, S. 222.

¹⁰⁰ E. L i p i n s k i. Op. cit., p. 68; V. H a a s. Op. cit., 171-173; A. A r c h i. The God Ea in Anatolia. Aspects of Art and Iconography: Anatolia and Its Neighbours. Ankara 1993, p. 33.

¹⁰¹ Այս համադրությունն առաջին անգամ տեսնում ենք «Բանբեր երևանի համալսարանի», 1985, № 2, էջ 84 հտն. տես նաև Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Հայոց ազգածագման հարցեր..., էջ 213-217, գրականությունը: Էայի հին աքադական ձևն է Hay(a), իսկ հնագույն, մ.թ.ա երրորդ հազարամյակի էբլայից հայտնի ձևը՝ hayyu(m), տես I. D i a k o n o f f. Նշվ. աշխ., էջ 83, ծանոթ. 22, A. A r c h i. Նշվ. աշխ., էջ 27, ծանոթ. 3:

ստեղծող» և *bel uzni* «իմաստուլթյան տեր»¹⁰² (Թարգմանված նաև խուռիբերեն և խեթերեն)¹⁰³, նույնական իրանական Ահուրա Մազդայի կերպարին և անվանը: Վերջինս, ինչպես ասվեց, նույնպես երկնքի ու երկրի ստեղծողն է համարվել, իսկ նրա անունը նշանակում է «իմաստուլթյան տեր» կամ «տեր իմաստուլթյուն»¹⁰⁴, որ էլ ավելի է մոտեցնում էային հայոց Արամազդին:

Ըստ ավանդույթյան, Հայկը, Բաբելոնից դնալով հյուսիս՝ «յերկիրն Արարազայ», հանդրվանում է մի լեռան ստորոտում, ապա այդ երկիրը թողնում է իր Կադմոս թողունը և շարժվելով «ընդ արևմուտս հիւսիսոյ», հաստատվում Վանա լճի հյուսիսային Հարթ դավառում (Խորենացի Ա.ժ., Սեբեաս Ա): Այս լեռան երկիրն ասորեստանյան աղբյուրների *Kadmuhū/Katmuhu/Kutmuhi*, հայ. Կադմեայ տուն երկիրն է: Քանի որ Հայկը Հարթ հասնելու համար շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա այդ լեռը պետք է տեղայնացվի Կադմուսի արևելքում, որտեղ Կորզվաց Արարատ լեռն է և *Kumme/ Qumenu* երկիրը՝ Թեշուբ-Թեյշեբայի պաշտամունքի հնագույն կենտրոնը, որն ասորեստանյան աղբյուրներում հանդես է դալիս որպես Կադմուսի արևելյան սահման¹⁰⁵: Իր այս տեղայնացմամբ Կումմեում Հայկը համապատասխանում է Թեշուբ-Թեյշեբային¹⁰⁶, որի հետ, ինչպես ասվեց, նույնական պիտի լիներ Կումմախայի ամպրոպի աստվածը՝ Արամազդի ամպրոպային ասպեկտի նախատիպը:

Հայոց երեք մեծ աստվածները՝ Արամազդը, Վահագնը և Միհրը կորոպ են կապվել ազգածին ավանդույթյան երեք առանցքային հերոսների՝ Հայկի, Արամի և Արա Գեղեցիկի հետ: Արամազդը և Հայկը, համապատասխանաբար, աստվածների և ազգածին հերոսների տոհմի նահապետներ են, Արամը և Վահագնը՝ առավելապես ռազմական կերպարներ, իսկ Միհրի վիպական ժառանգ Փոքր Մհերը և Արան՝ «մեռնող և վերածնվող» աստվածույուններ: Բայց այս կապերը, ինչպես հայ և ուրարտական աստվածների դեպքում, միարժեք չեն: Հայկի և Արամի հայոց երկու անվանադիր նախնիների կերպարները, որոշ առումներով, նույնական են՝ Արամը. Մ.Ա. րեյսանի արտահայտությամբ, «Հայկի մի երկրորդ տիպարն» է¹⁰⁷. այդ դեպքում, արդյո՞ք Հայկի «երրորդ տիպարը» չէ Արա Գեղեցիկը, Հայաստանի կենտրոն Այրարատի էպոնիմը:

Արամազդն իրենում ամփոփում է աստվածների հոր, ամպրոպի աստծու և անբրաշխարհի աստծու կերպարները: Նա, ինչպես և Արամը, Թեշուբի մի համապատասխանուլթյունն է, որի անվան առաջին մասն էլ նույնական է Արամին: Արամ նահապետի երկրորդ հալաուկորդն էր, ինչպես ասվեց, Բարշամը: Արամի և Բարշամի պատերազմը կրկնում է Հայկի և Բելի կռի-

¹⁰² G. L e i c k. Նշվ. աշխ., էջ 37:

¹⁰³ A. A r c h i. Նշվ. աշխ., էջ 29:

¹⁰⁴ *Sb's oshnakh Eir I*, էջ 684:

¹⁰⁵ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 98-99. Կադմուսի վերաբերյալ տե՛ս RLA 5, S. 487-488.

¹⁰⁶ Այս մասին տե՛ս Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիրչաքաղաքը Նիբուրի լեռներում. - ՊՐՀ, 1992, № 1:

¹⁰⁷ Մ. Ա ր ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., հ. Ա, էջ 55:

վը (Արամը «երկրորդ Հայկն» է, իսկ Բարչամ-Բա ալ Շամինը՝ «երկրորդ Բելր», որի անվան առաջին տարրը ստուգաբանորեն նույնական է Բելին): Արամի անունը նշանակում է «սև, թուխ», և նա ու Բարչամը՝ «սպիտակափառ» Բարչամինի վիպականացած հետնորդը, ներկայանում են որպես սևի և սպիտակի հակադրության լայնորեն տարածված առասպելի հերոսներ¹⁰⁸: Խուռիական ավանդույթում այս առասպելը, ընդ որում, փոխառված հնդեվրոպական աղբյուրից, դրսևորվում է Թեշուբի և Արծաթ աստվածուհիների հակադրության ձևով¹⁰⁹: Այս առումով հատկանշական է, որ Արամազդի և Բարչամինի տաճարները գտնվում էին իրար մոտ, նույն Դառանաղի գավառում, որը կապ էր կամ հակադրություն էր ակնարկում նրանց միջև, ընդ որում Արամազդի սրբավայր Կամախը մի սև լեռան վրա¹¹⁰:

Միջագետքյան առասպելում ներգալը գնում է անդրաշխարհ և վերադառնում այնտեղից էրրա անունով¹¹¹ (էրրան ներգալի մի հիպոստասիսն է): Մյուս կողմից, էրրան համազրելի է պամփյուլիացի հերոս էրի հետ. վերջինս զոհվում է, բայց դիակիզման խարույկի վրա վերակենդանանում: Այսինքն՝ էրրան ու էրը և անունով, և կերպարով համապատասխանում են մեռնող և հառնող Արային¹¹²:

Այսպիսով, հավանական է, որ Եփրատի ակունքների մեծ աստվածը, աստվածների հայր Արամազդի հնագույն նախորդը, լինելու Հայկը, կամ, ավելի ճշգրիտ՝ Բեալեբամբ, Հայկի նախնական տարբերակը, որը նույնացվել է որսչ հինարևելյան աստվածների հետ: Արամազդի բարդ կերպարն իրենում ներառել է Կումմախայի ամպրոպի աստծուն, հայոց Արամին և, թերևս, Ս.GUR-ներգալի կրկնակ էրրային, այսինքն՝ Արամազդը, իբրև դերագույն աստված, իրենում միավորել է նաև Արամի և Արայի հատկանիշները¹¹³:

Ազգածին ավանդության մեզ հայտնի միակ հերոսուհին Շամիրամն է: Պատմական համատեքստում նա մ.թ.ա. VIII դարավերջի Ասորեստանի թագուհի Սամմուերամատն է (հուն. Սեմիրամիս), որը հանդես է դալիս բազում ժողովուրդների բանահյուսության մեջ: Վերջինս, հավանաբար, պաղեստինյան ծագում է ունեցել, իսկ նրա անունը սիրիական դիցուհի Անասի մի կոչումն է՝ samīm gamīm «բարձր երկինք», որն արասցուվել է նաև նրա

¹⁰⁸ А. Е. Петросян. *Նշվ. աշխ.*, էջ 55:

¹⁰⁹ *Նույն տեղում*, էջ 53-55:

¹¹⁰ Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ռ - ս ե ղ յ ա ն. *Նշվ. աշխ.*, հ. 2, էջ 913:

¹¹¹ Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament. Princeton, 1969, p. 507-512.

¹¹² Էրի և Արայի համադրության վերաբերյալ տե՛ս Մ. Է մ ի ն. Վէպը հնոյն Հայաստանի. *Մոսկվա*, 1850, էջ 85-88, էրրայի առնչությամբ՝ Ա. Պ ե ա ռ ո ս յ ա ն. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս, էջ 168:

¹¹³ Հայկի՝ Հայասայի՝ հպսնիմ լինելու վարկածն առաջարկել է Հ. Մանանդյանը, որը ելնում էր Հայասայի՝ Հարբի շրջանում տեղայնացումից, տե՛ս А. М а н а н д я н. *Նշվ. աշխ.*, էջ 557, 561 (այս տեղայնացումը չի ընդունվում մասնագետների մեծամասնության կողմից). այլ հիմնավորումներ տե՛ս Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Հայոց ազգածագման հարցեր..., էջ 213-216, հարցի վերաբերյալ եղած գրականությունը: Արամազդի և ազգածին նահապետների առնչությունների վերաբերյալ տե՛ս А. П е т р о с я н. *Նշվ. աշխ.*, էջ 142-143. Արայի և Ս.GUR-ի հնարավոր կապի մասին՝ Г. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. I, с. 89.

առասպելական կերպարում¹⁴: Հայկական բանահյուսության մեջ Շամիրամը համարվել է Անահիտի և Աստղիկի վիսպականացած տարբերակը¹⁵: Ինչպես տեսանք, Նանեն ևս, իր սրբավայրի թիվ անվամբ, առնչվում է Շամիրամին, որն, այսպիսով, կրում է երեք դիցունհիների հատկանիշները:

14. Հայոց կրոնում երևան է գալիս բնիկ հայկական հնդեվրոպական տարրը: Հնդեվրոպական բանաստեղծական արվեստի մի վառ օրինակ է համարվում, ինչպես ասվեց, «Վահագնի երգը»: Հնդեվրոպական բանաստեղծական լեզվի նմուշներ են նաև պահպանված կրոնական բանաձևերի պատառիկները՝ ինչպես «(մեծ) արի Արամաղը», «արարիչ (երկնի և երկրի)», ուր, հնդեվրոպական ծագման բառերում, ի հայտ է գալիս *ar* վանկի անագրամը¹⁶:

Հայոց դիցարանի կառույցը որոշակիորեն համադրելի է հնդեվրոպական առասպելաբանության բնորոշ երեք տիրակալության, ռադմի և պտղաբերության «Ֆունկցիաներին» (ըստ ժ.Դյումեզիլի): Այսպես, Արամաղըն աստվածների նահապետն է, Վահագնը՝ ռադմի և քաջության աստված, իսկ Միհրի վիսպական հեանորդ Փոքր Մհերը պետք է վերածնվի, երբ աշխարհն առավել պտղաբեր դառնա: Հայոց ազգածին ավանդության առանցքային կերպարները՝ Հայկը, Արամը և Արա Գեղեցիկը, որոնք ծագում են Հայոց վաղնջական աստվածներից, ինչպես ցույց են տվել Ս. Ահյանն ու ժ.Դյումեզիլը, ներկայացնում են այդ նույն ֆունկցիաները¹⁷:

Ինչպես ասվեց, Արամաղի կենտրոն Անի ամրոցում էր դանդում հայ արքաների գերեզմանոցը: Մյուս կողմից, Գրիգոր Լուսավորիչը և նրա ժառանգները թաղվել են Անի-Կամախին մերձակա Թորդանում՝ Բարշամինի պաշտամունքի կենտրոնում (Խորենացի Բ.դա, Գ.ժա, ժդ): Արամաղըն ու Բարշամինը, որոնց սրբավայրերում են թաղվել երկրի աշխարհիկ ու կրոնական տերերը, իրենք էլ կարող են համապատասխան կերպարներ ներկայացնել: Հավանական է, որ այս բաժանումը շարունակում է Հին, հեթանոսական ավանդույթը՝ աշխարհիկ և եկեղեցական իշխանության բաշխումը

¹⁴ M. W e i n f e l d. Semiramis: Her Name and Her Origin. Ah, Assyria... Studies in Assyrian History and Ancient Near Eastern Historiography Presented to H. Tadmor.— “Scripta Hierosolymitana”, vol. XXXIII. Jerusalem, 1991. p. 99-103.

¹⁵ Շամիրամի և Հայկական դիցունհիների կապի վերաբերյալ տես հատկապես Մ. Աբեղյան. Նշվ. աշխ., հ. է, էջ 156-162:

¹⁶ Ս. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները Հայ Հին բանաստեղծության և բանահյուսության մեջ.— ՊԲՀ, 1987, № 4, էջ 50, 53. տես և A. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 142: Հայ. արի Արամաղը համարելի է լուսական ամպրոպի աստծու ariyaddalis և հունական Զևսի “Αρείος (օգտագործվել է նաև Աթենասի և Ափրոդիտի հետ. Հմմտ. և հուն. պատերազմի աստծու “Αρης Արես անունը) կոչումներին: Այս լուսական բանաձևը մեկնաբանվում է «ընկերական ամպրոպի աստված», ըստ *αιγιο-ի «ընկեր» խմաստի, տե՛ս օրինակ T. B. Γ α μ κ ρ ε λ ι Δ ε ε, B. B. Η β α η ο β. Նշվ. աշխ., էջ 755: Արեսի անվան ծագման վերաբերյալ, հնդեվրոպական *aryo-ի տունջությամբ, այսինքն՝ որպես Հայ. արի և լուսվ. ariyaddali- ձևերի զուգորդ (Հմմտ. միկեն. Are-jo, Are-mene), տե՛ս N. D. K a z a n a s. Indo-European Deities and the Rgveda.— “Journal of Indo-European Studies”, 2001, № 3-4, p. 277:

¹⁷ S. A h y a n. Les debuts de l’histoire d’Armenie et les trois fonctions indo-européennes.— “Revue de l’histoire des religion”. 1982, CIC-3; G. D u m é z i l. Le roman des jumeaux. Paris, 1994, p. 133-141.

այս երկու աստվածների միջև, որոնք, այսպիսով, պետք է ներկայացնեն ժ. Դյումենզիլի առաջին տիրակալության ֆունկցիայի բնորոշ իրավական (արքայական) և հմայական (քրմական) ասպեկտները:

Հայոց առաջին կաթողիկոսներից ոմանք թաղվել են Նանեի պաշտամունքի կենտրոն թիլ ավանում, որը տրվել էր Գրիգոր Լուսավորչին որպես անձնական կալվածք (Փավստոս Գ.բ, Ե.ի.դ, Խորենացի Բ.դա, Գ.լթ): Հավանաբար աշխարհիկ և քրմական գործառույթյունների նման մի հարաբերություն է գոյություն ունեցել նաև Անահիտի և Նանեի պաշտամունքների միջև: Հետաքրքիր է, որ երկու դեպքում էլ քրմական գործառույթյունը կապվում է սեմական ղիցանունների հետ. սեմական է նաև քուրմ տերմինը, որը հին Հայոց քրմության սեմական կասերի մասին համապատասխան ենթադրությունների հիմք կարող է տալ:

Վերջերս հնդեվրոպական առասպելաբանության մեջ փնտրվում է ևս մեկ, այսպես կոչված «չորրորդ ֆունկցիա», որը, մի տեսակետի համաձայն, պետք է որ կապվեր օտարոտի ուժերի և մահվան աշխարհի հետ¹¹⁸: Տիրը, մահվան հրեշտակի հեթանոսական նախորդը, միանգամայն համապատասխանում է այդ դերին:

Անահիտը, Նանեն և Աստղիկը նույնացվել են համապատասխանաբար հունական Արտեմիսին, Աթենասին և Ափրոդիտեին. Անահիտը, որպես մեծ մայր ղիցուհի, համադրելի է առաջին ֆունկցիային. Աթենասը ռադմի ղիցուհի էր (երկրորդ ֆունկցիա), իսկ Ափրոդիտեն սիրո և պտղաբերության (երրորդ ֆունկցիա): Ըստ այդմ, նրանք կարող են դիտվել որպես հնդեվրոպական «տրանսֆունկցիոնալ» ղիցուհու երեք հիպոտատիսները (համո. Հերա, Աթենաս, Ափրոդիտե)¹¹⁹:

15. Հայոց նախաքրիստոնեական կրոնի վրա օտար, հատկապես իրանական ազդեցությունն ակնհայտ է ու անվիճելի, և հզոր ազդեցություններ կան բազում հին կրոնական ու ղիցաբանական համակարգերում: Ըստ Ստրաբոնի (XI.4.16)՝ հայերը պաշտել են սյարսիկների հետ նույն աստվածներին և կատարել պարսիկների բոլոր ծեսերը (պարսիկ ասելով, թերևս, ի նկատի են առնվում իրանի այն ժամանակների տիրապետող տարրը՝ պարթևները): Եվ դա մինչև Արշակունիների հայոց դահին տիրապելը, մինչդեռ հայտնի է, որ հայոց լեզվում և մշակույթում իրանական ազդեցություն մեծադուրյն մասը գալիս է արշակունյաց դարաշրջանից:

Աքեմենյան դարաշրջանից Հայաստանի արքաները և իշխանները կրում էին իրանական, կրոնական բնույթի անուններ, նույնը և Արտաշիսյաններն ու Արշակունիները: Արդեն քեմենյան ժամանակներում հայոց կրոնը պիտի որ ենթարկված լիներ իրանական ազդեցության: Արտաշիսյանները հելլենասերներ էին, ուրեմն նրանք սլիտի լինեին հայոց աստվածների հունականացման ջատագույնները: Արշակունիները, տիրելով հայոց

¹¹⁸ N. J. A l l e n. The Ideology of the Indo-Europeans: Dumézil's Theory and the Idea of a Fourth Function. – "International Journal of Moral and Social Studies", 1987, № 2, p. 32. Նույնի՝ Romulus and the Fourth Function. – Indo-European Religion after Dumézil. – "Journal of Indo-European Studies Monograph", 16.

¹¹⁹ Հերայի (Ջևսի կինը), Աթենաս և Ափրոդիտե եռյակի համանման ֆունկցիոնալ մեկնաբանությունը տես G. D u m é z i l. Mythe et épopée. T. I, Paris, 1968, p. 580-586.

դահին, անկասկած, պիտի նոր թափ հաղորդեին իրանական ազդեցութեանը՝ Այսպիսով, հայոց իշխող վերնախավը պիտի լիներ իրանական և հունական կրոնական ազդեցությունների ներդրողը:

Բացի դիցանուններից, հայերենում իրանական են կրոնի և հավատալիքների հետ կապված բազմաթիվ կարևոր տերմիններ, որոնց մի մասը անցել է նաև քրիստոնեությունը¹²⁰: Դիցանունների և կրոնական տերմինների փոխառությունը ցույց է տալիս, որ փոխառվել են նաև իրանական որոշ կրոնական պատկերացումներ: Բայց երբեմն նաև հայկական աստվածների կերպարներն ու համակարգն են հանգեցնում իրանական նախատիպերի: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հին հայերը և, ընդհանրապես, Հայաստանի հին բնիկները, չունենալով սեփական կրոնական և առասպելաբանական պատկերացումներ, իրանական և սեմական մի քանի աստվածների ծաղկաքաղ են արել և ստեղծել մի ինչ-որ դիցաբանական կոնցլումբրատ, արհեստական կառույց, որը դարձել է նրանց հին կրոնը: Ավելին, հաճախ կամայական իրանական մեկնաբանություններ ստեղծվում հայ աստվածների բնութագրերին ցանկացած երևույթի հիմքը փնտրելով իրանական աշխարհում, որն անընդունելի է¹²¹:

Հայոց նախաքրիստոնեական և իրանական կրոնների տարբերությունները համակարգային են, և հայկականը չի կարող իրանականի (զրադաշտականություն) մի դրսևորում համարվել: Հայոց կրոնին բնորոշ էին բազմաստվածությունը (ընդ որում դիցարանը կաղմված էր ընտանեկան սկզբունքով), կուսքերի սլաշտամունքը, քրմերը բացարձակապես տարբեր էին իրանական մոզերից և չկար Ահուրա Մազդայի հակոտնյայի կերպարը, որն արմատականորեն տարբերում է այն զրադաշտականությունից: Այս հիմնավոր տարբերությունները նշել են արդեն Հ. Գեյցերը, Ա. Մեյեն, Հ. Տաշյանը, Ա. Մատիկյանը, Գ. Ղափանցյանը, Կ. Տրևերը, Գ. Սարգսյանը և այլք¹²²: Որոշ ընդհանրություններ տիպաբանական են, մի մասն էլ դալիս է ընդհանուր հնդեվրոպական ժառանգությունից և հինարևելյան մշակութային ենթաշերտից:

Մեր աշխատության նպատակն է ցույց տալ, որ հայ հեթանոսական կրոնում տեղի է ունեցել հին աստվածների վերանվանում, բայց նոր ա-

¹²⁰ Օրինակ՝ բազին, զոհ, պաշտել, խոստովանել, սրհենել, նղովել, դրախտ, դժոխք, հրեշտակ, դև, հմայել, կախարհ, մարգարե, հրաշք, հրեշ և այլն, տես Գ. Ջ ա հ ու և կ յ ա ն. Հայոց լեզվի սլաշտություն. նախագրային շրջան. Երևան, 1987, էջ 576:

¹²¹ Այս հոգևածի սահմաններում հնարավոր է քննարկել նաև հայոց աստվածների բնութագրերը, նրանց վերաբերյալ եղած բանաձևային տեքստերը և նրանց համակարգային խմբավորումները: Բերենք միայն մեկ-երկու օրինակ: Այսպես, Արամազդի «արարիչ երկնի և երկրի» կոչումը բնորոշ է տարածաշրջանի մեծ աստվածներին՝ շումերա-աքադական Ան(ու), արևմտասեմական էլ և այլն. միանգամայն բնական է այն տեղական արարիչ աստծուն բնութագրող բնիկ հայկական բանաձև համարելը, որը հետագայում ունենանսի մեջ է մտել Ահուրամազդայի համանման բնութագրի հետ: Արամազդ, Անահիտ, Վահագն երկաթը, ինչպես տեսանք, կարող է հայաստան արմատներ ունենալ, իսկ իրանական Ահուրամազդ, Անահիտ, Միթրա երկաթը, որն ընդգրկում է Անահիտայի ոչ իրանական կերպարը, տեղական, ոչ իրանական ակունքներ պիտի ունենա (տարածաշրջանի հին եռյակների վերաբերյալ տես V. H a a s. Նշվ. աշխ., էջ 477-481): Մի շարք դիցաբանական պատկերացումներ էլ, ինչպես Անահիտի «ոսկե» բնութագրերը, Վահագն, Անահիտ, Աստղիկ երկաթը, ակնհայտորեն իրանական չեն:

¹²² Այս տեսակետը հիշվում է և Elr. II, p. 435, որը հակադրվում է նույն հրատարակության բազում այլ նյութերի հայեցակետին:

նունների տակ շարունակել են գոյատևել հին, տեղական պաշտամունքները: Հայոց մեջ իրանական դիցանունների ներդրումը կատարվել է այն ճանապարհով, ինչպես կրոնական ազդեցութունների այլ դեպքերում նոր անուններով պաշտամունքները վերագրվել են եղած հին, նրանց հետ ինչոր չափանիշներով համապատասխանեցված պաշտամունքների վրա, որի հետևանքով էլ հին կերպարները փաստորեն միայն անվանափոխվել են, պահպանելով իրենց հին բնութագրերը: Շարունակել է գոյատևել դիցարանի հին կառույցը, հիմնականում որպես հետևանք նոր անուններով պաշտամունքների հին սրբավայրերում տեղայնացվելու:

Ավարտելով, հավաստենք, որ Հայոց նախաքրիստոնեական կրոնի և դիցարանի վրա իրանական և սեմական ազդեցութունները եղել են ավելի թույլ, քան կարծվել է, և արտահայտվել են հիմնականում տերմիններով ու դիցանուններով: Հիշենք, որ կրոնական փոփոխութունները կարող են դիտվել որպես «տերմինաբանական և անվանաբանական հեղաշրջումներ»: Ահա այդպիսի «հեղաշրջում» է եղել Հայաստանում իրանական ազդեցության տակ (եղել է ևս մեկը, հելլենիստականը, ավելի թույլ միայն անվանաբանորեն արտահայտված): Հայոց նախաքրիստոնեական դիցարանի աստվածների մեծ մասը հանգում է, ի վերջո, հին հայաստական աստվածներին: Ազդեցութունները չեն վերափոխել հին դիցարանի առավել դժվար փոփոխվող բնութագրերը՝ կառուցվածքը և հիերարխիան, պաշտամունքների աշխարհագրութունը, հիմնական աստվածների համակարգը, նրանց կերպարային բնութագրերը և փոխհարաբերութունները:

ДРЕВНЕЙШИЕ ИСТОКИ АРМЯНСКОГО ПАНТЕОНА

АРМЕН ПЕТРОСЯН

Резюме

Имена богов армянского дохристианского пантеона в большинстве иранские. Но образы богов и их культы имеют древние корни в Армении. Верховный бог Арамазд, центр культа которого находился в поселке Али-Камах (= хетт. Куммаха), неотделим от древнего местного бога грозы Тешуба/ Тейшебы, центры которого носили подобные имена — Кумме, Кумманни (поздняя Комана). Богиня Анахит была тождественна с богиней Команы (в древности — жена Тешуба). Образ Мхера, эпической версии бога Михра, восходит к урартскому Халди. Культы большинства богов были локализованы в небольшом районе на северо-западе исторической Армении и должны восходить к древней местной традиции — богам Хайасы.

THE EARLIEST SOURCES OF THE ARMENIAN PANTHEON

ARMEN PETROSYAN

S u m m a r y

The names of gods of Armenian Pre-Christian pantheon are in majority of Iranian origin. Nevertheless, the figures of the gods and their cults have ancient roots in Armenia. The supreme god Aramazd, whose cult center was located in the village of Ani-Kamax (= Hittite Kummaha), is inseparable from the ancient local thunder and storm god Tesub/ Teišeba, whose centers bore similar names – Kumme, Kummanni (= classic Komana). The goddess Anahit was identical with the goddess of Komana (in antiquity – wife of Tesub). The figure of Mher, epicized version of the god Mihr, is derived from the Urartian god Haldi. The cults of the majority of gods were located in a small area to the northwest of historic Armenia and are to be traced back to ancient local tradition – the gods of Hayasa.